



«ՁՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ-ի

**պողպատի և թուջի ջարդոններից պողպատե և թուջե
ծուլվածքների արտադրության**

**վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման ՇՄԱԳ հաշվետվություն**

07 | ապրիլի | 2024թ

Նախաձեռնող:

Ձուլակենտրոն PԲԸ

Ք. Չարենցավան, Սանասար Մելտոնյանի
փողոց, 3

<http://www.dzulakentron.am>

Tel; (0226) 4-49-53

Mob; + (374) 93 707014

E-mail; info@dzulakentron.am

Տնօրեն; Սամվել Գևորգյան



Խորհրդատու:

Ծատուրյան Քընսալթինգ



Տնօրեն Արայիկ Ծատուրյան



Խորհրդատու:

<https://tsaturyanconsulting.am/>

Mob; (+374) 94 800 877;

E-mail; info@tsaturyanconsulting.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	5
2.	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը.....	7
3.	Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային եվ միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթեր	10
4.	Նախագծի այլընտրանքները, այդ թվում՝ գրոյական տարբերակը.....	21
	Զրոյական տարբերակ	21
	Քննարկվող տարբերակ.....	21
5.	Նախատեսվող գործունեության բնութագիրը և գործունեության նկարագիր	22
6.	Ձեռնարկության ընդհանուր արտանետումների բնութագիրն ու կազմը /հեռանկարում 50000տ/տարի/	29
7.	Տեխնոլոգիական գործընթացները	38
8.	Նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը.....	51
9.	Բնական պայմաններ.....	58
10.	Շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը Տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհը.....	65
11.	Պատմության և մշակույթի հուշարձաններ.....	75
12.	Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների բնութագիրը89	
	Մակերևույթային և ստորերկրա ջրեր.....	95
	Մթնոլորտային օդ.....	107
	Հողի որակի նորմեր.....	111
	Թափոնների կառավարում	111
13.	Շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր	118
14.	Շրջակա միջավայրի վրա ազդեցության տնտեսական վնասի գնահատում	122
15.	Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում և վթարային իրավիճակներում նախատեսվող միջոցառումները.....	125
16.	Սոցիալական ազդեցության մեղման միջոցառումներ	127
17.	Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը կամ նվազեցմանը ուղղված միջոցառումների ծրագիր.....	128
18.	Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիր	130
19.	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ	133
20.	Արտակարգ և վթարային իրավիճակներ.....	135

Օգտագործված գրականության ցանկ	137
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Զգայուն կլանիչների և սանիտարապահպանական գոտու իրավիճակային հատակագիծ.....	139
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՇՄՆ պատասխանը նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ենթակա լինելու մասին.....	140
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Կադաստրային քարտեզ.....	141
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Տեղամասի տեղադիրքը WGS-84 ազգային գեոդեզիական կորդինատային համակարգում.....	142
ՀԱՎԵԼՎԱԾ 5. Պետական գրանցման վկայական.....	143
Հավելված 6 ԱՎՕ փորձաքննություն	144
Հավելված 7 Ցրման հաշվարկ.....	150

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

<<Ձուլակենտրոն>> ԲԲ ընկերությունը գտնվում է Չարենցավան քաղաքի արդյունաբերական գոտում:

Ձեռնարկության հիմնական գործունեությունն պողպատի և թուջի ջարդոններից պողպատե և թուջե ձուլվածքների ստացումն է՝ կադապարման միջոցով:

- a. Հասցե. ՀՀ, Բ. Չարենցավան, Սանասար Մելտոնյանի փողոց, 3
- b. հեռախոս՝ (0226) 4-49-53
- c. ֆաքս՝ (0226) 4-43-20
- d. կայք՝ <http://www.dzulakentron.am/hy>

Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ԲԲԸ՝ Բաց Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՍՆ՝ Սանիտարական նորմ

ՇՄԱԳ՝ շրջակա միջավայրի ազդեցության գնահատում

2. Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը և նկարագրիրը, որը հիմք կհանդիսանա շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների կանխարգելման, նվազեցման կամ բացառմանն ուղղված պարտադիր միջոցառումների մշակման և կիրառման համար:

<<Ձուլակենտրոն>> Բաց Բաժնետիրական Ընկերությունը հիմնադրվել է 1997թ. նախկին Ցենտրոլիտ ձեռնարկության բազայի հիման վրա և հանդիսանում է ՀՀ-ում պողպատե և թուջե ծովվածքների արտադրության ամենախոշոր ձեռնարկություններից մեկը: Ձեռնարկությունը իր գործունեությունը սկսել է դեռևս Խորհրդային միության տարիներին և հանդիսացել է Հայաստանի Հանրապետության մետալուրգիական ճյուղի կարևոր սեգմենտ՝ պլանային տնտեսության շրջանակներում: Այն նպաստել է Չարենցավան քաղաքի՝ որպես արդյունաբերական կենտրոնի կառուցմանը և զարգացմանը:

<<Ձուլակենտրոն>> Բաց Բաժնետիրական Ընկերության արտադրանքը բավարարել է ՀՀ և նախկին ԽՍՀՄ տարածքի հաստոցաշինական, մեքենաշինական, հանքարդյունաբերող և այլ ձեռնարկությունների պահանջարկը: Ձեռնարկությունը արտադրել է տարբեր կառուցվածքային ծովվածքներ, լայն սպառման ապրանքներ և ոչ ստանդարտ սարքավորումների համար նախատեսված դետալներ:

Ներկայումս «Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն արտադրում է պողպատե աղացագնդեր, թուջե և պողպատե ծովվածքներ ու դետալներ, կիսապատրաստուկներ, որոնք օգտագործվում են հիմնականում հանքարդյունաբերության և շինարարության ոլորտներում: Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

2023թ.-ի մայիսի 3-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /Այսուհետ՝ Օրենք, ՀՕ-150/ 12-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Բացի այդ, համաձայն սույն օրենքի 18-րդ հոդվածի, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության է ենթակա նաև 12-րդ հոդվածում թվարկված նախատեսվող գործունեության տեսակների վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում կամ քանդում կամ նախագծային փոփոխությունը:

Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են մինչև հիմնադրությային փաստաթղթի ընդունումը և (կամ) նախատեսվող գործունեության իրականացումը: Փորձաքննության իրականացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու տեղադրությունը և դրանցով պայմանավորված՝ հնարավոր գումարային, ամբողջական ազդեցության աստիճանը:

Հիմք ընդունելով ներկայիս Օրենքի հոդված 37-ից «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բխող ենթաօրենսդրական ակտերի ուժի մեջ մտնելու ժամկետները, փորձաքննական գործընթացը նախատեսվում է իրականացնել համաձայն սույն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից ելնելով՝ «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին չավարտված փորձաքննության գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են փորձաքննության գործընթացն սկսվելու պահին գործող իրավական ակտերով»: Այսինքն փորձաքննությունն իրականացվելու է երկու փուլով՝ համաձայն 2014թ.-ի ՀՕ-110 օրենքի.

1) նախնական փուլ, որի ընթացքում ուսումնասիրվում է նախնական գնահատման հայտը.

2) հիմնական փուլ, որի ընթացքում փորձաքննվում է հիմնական գնահատման հաշվետվությունը:

Համաձայն Օրենքի հայտը՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած ծանուցման փաթեթ է, որը ներառում է հիմնադրույթային փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին:

Փորձաքննության նախնական փուլն իրականացվում է ձեռնարկողի կողմից նախնական գնահատման հայտը լիազոր մարմին ներկայացնելու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Փորձաքննության նախնական փուլում՝

1) քննարկվում է ներկայացված նախնական գնահատման հայտի լրակազմությունը.

2) կանխորոշվում են շրջակա միջավայրի վրա հիմնադրույթային փաստաթղթի դրույթների և (կամ) նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության շրջանակները, ըստ կատեգորիաների համար սահմանված գնահատումների հաշվետվության բովանդակությունն ու դրան վերաբերող պահանջները, որոշվում են գործընթացի մասնակիցների շրջանակները, կազմվում և ձեռնարկողին է տրամադրվում այդ ամենն ամփոփող ազդեցության գնահատման տեխնիկական առաջադրանքը:

Համաձայն «ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերը»-ի XII. «ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԴԱՇՏՊԱՆԻՉ ԳՈՏԻՆԵՐ» գլխի կետ 106. ԱԷԿՏԿ և բնակեցման տարածքների միջև պետք է նախատեսվի սանիտարապաշտպանական գոտի՝ ըստ ՍՆ 245 սանիտարական նորմերի պահանջների: Սանիտարապաշտպանիչ գոտու լայնությունը պետք է բավարարի մթնոլորտային օդում արդյունաբերական կազմակերպությունների արտանետումներում պարունակվող վնասակար նյութերի ցրման հաշվարկներով՝ հաշվի առնելով սույն շինարարական նորմերի 23-րդ բաժնի պահանջները:

Ըստ կետ 111.-ի պահանջվող սանիտարապաշտպանիչ գոտիների չափի, տրանսպորտային կապերի, բնակելի թաղամասերի, մանկական, նախադպրոցական, ուսումնակրթական կառուցապատման, ինչպես նաև հանգստի կազմակերպման, առողջարարական, բնության և պատմամշակութային հուշարձանների պահպանման

տարածքների նկատմամբ կազմակերպությունների տեղաբաշխմանը ներկայացվող պահանջների, ԱԷԿՏԿ տարածքների քաղաքաշինական դասակարգումը ներառում է՝

2) խումբ Բ. Վնասակար արտանետումների աղբյուր հանդիսացող, 50-ից 300մ լայնությամբ սանիտարապաշտպանիչ գոտիներ և երկաթուղագծեր պահանջող օբյեկտներով կառուցապատված տարածքներ:

Նախատեսվող գործունեության նպատակն է իրականացնել տեխնոլոգիական վերազինում պողպատե և թուջե ձուլվածքների ստացման արտադրության (15000.0տ) տարեկան արտադրողականությունը հասցնել նախագծային 50000.0տ/տարի, աշխատելով օրական 24 ժամ աշխատակարգով: <<Ձուլակենտրոն>> ԲԲԸ-ն նախագծային նշված արտադրողականությանը կարող է հասնել ընկերության ներկայումս գործող արտադրական հզորությունները օրական 24 ժամ աշխատակարգով աշխատելու դեպքում՝ պահանջվող համապատասխան քանակի հումքի առկայության դեպքում:

3. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային եվ միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթեր

Քաղաքական, օրենսդրական և վարչական շրջանակները

Սույն գլուխը ներկայացնում է <<Ձուլակենտրոն>> ԲԲԸ-ի նախագծին առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթերը, ներառյալ բնապահպանական քաղաքականությունը, շրջանակային և ճյուղային օրենսդրական ակտերը՝ հողային հարաբերությունների, առողջության և անվտանգության հարցերով:

<< ազգային օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի “Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը”:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. “Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը”:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են “Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (29.05.2006 թիվ 750-Ն), “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277-Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.1.2017 թիվ 1404-Ն) որոշումները: “Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը” ընդունվել է ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ. N 365-Ն հրամանով:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն նախագծին առնչվող հողատարածքների օգտագործման հարցերը կարգավորվում են համաձայն ՀՀ հողային օրենսգրքի պահանջների:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով: ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերով:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն նախագծին առնչվող ջրային ռեսուրսների օգտագործման հարցերը կարգավորվում են համաձայն ջրային օրենսգրքի պահանջների:

Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրքով:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն նախագծի իրականացման շրջանակներում ընդերքօգտագործման հողերի հետ հարաբերությունները կարգավորվում են համաձայն ընդերքի մասին օրենսգրքի պահանջների:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները: Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջև, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն նախագծի գործառույթները իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել աշխատանքային օրենսգրքի պահանջներով:

“Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին” ՀՀ օրենք

Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության, համաձայն “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և

փորձաքննության մասին” 2023թ.-ի Հայաստանի Հանրապետության օրենքի (03.05.23թ.ՀՕ-150-Ն) /Այսուհետ՝ Օրենք/:

Վերը նշված Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործունեության տեսակներ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված գործունեություն, իսկ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով նախատեսված դեպքերում՝ նաև դրանց վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում, ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների դեպքում՝ շահագործումից հանում (ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտ հանդիսացող գերեզմանոցի դեպքում՝ փակում) կամ քանդում կամ նախագծային փոփոխություն. սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրության փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա”, ”Բ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են ելնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու տեղադրությունը և դրանցով պայմանավորված՝ հնարավոր գումարային, ամբողջական ազդեցության աստիճանը:

Հիմք ընդունելով ներկայիս Օրենքի հոդված 37-ից «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» բխող ենթաօրենսդրական ակտերի ուժի մեջ մտնելու ժամկետները, փորձաքննական գործընթացը նախատեսվում է իրականացնել համաձայն սույն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջից ելնելով՝ «Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սկսված և սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին չավարտված փորձաքննության գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են փորձաքննության գործընթացն սկսվելու պահին գործող իրավական ակտերով»: Այսինքն փորձաքննությունն իրականացվելու է համաձայն 2014թ.-ի ՀՕ-110 օրենքի պահանջներից ելնելով, առաջնորդվելով միայն նոր Օրենքի 12-րդ հոդվածով թվարկված նախատեսվող գործունեության տեսակները՝ ըստ բնագավառների, ինչպես նաև դրանց համար նախատեսված՝ փոփոխված, պետական տուրքի չափը:

Փորձաքննությունը իրանացվում է երկու փուլով: Առաջին փուլում ներկայացվում է գործունեությունը նկարագրող հակիրճ բացատրագիր (նախնական գնահատման հայտ), կազմակերպվում են առաջին հանրային քննարկումները և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են բնապահպանության նախարարություն: 30 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կազմում գործող փորձաքննական կենտրոնը ուսումնասիրում է հայտը և կազմակերպում երկրորդ հանրային քննարկումները, որից հետո տրամադրում է տեխնիկական առաջադրանք “Ա” և “Բ” կատեգորիաների համար, իսկ “Գ” կատեգորիայի դեպքում (ներառվել է “Բ” կատեգորիայի մեջ, այս դեպքում փոխվել է պետական տուրքի չափը)՝ փորձաքննական եզրակացություն:

Երկրորդ փուլում ձեռնարկողը կազմակերպում է երրորդ հանրային լսումները, որտեղ ներկայացնում է գործունեությունը նկարագրող փաստաթուղթը (ծրագիր, նախագիծ) և ՇՄԱԳ հաշվետվությունը, որոնք, լսումների նյութերի հետ մեկտեղ ներկայացվում են փորձաքննական կենտրոն:

“Ա” կատեգորիայի համար փորձաքննության հիմնական փուլը տևում է 60 աշխատանքային օր, իսկ “Բ” կատեգորիայի համար՝ 40 աշխատանքային օր, որի ընթացքում կազմակերպվում են չորրորդ հանրային քննարկումները: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

Ըստ օրենքի հիմնադրության փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացն իրականացվում է 2 փուլով 4 հանրային քննարկումների իրականացմամբ: Գործընթացի ավարտին տրվում է Պետական փորձաքննական եզրակացություն:

“Հայաստանի Հանրապետության բնակչության
սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին”

ՀՀ օրենք /12.12.1992թ./

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական եւ կազմակերպական հիմքերը, ինչպես նաեւ պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի

վնասակար եւ վտանգավոր գործունեւորի ազդեցությունը եւ բարենպաստ պայմաններ ապահովում նրա եւ ապագա սերունդների կենսունակության համար:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն նախագծի շրջանակներում նախատեսվող գործունեությունների աշխատանքների կազմակերպման ժամանակ անձնակազմի սանիտարահամաճարակային անվտանգության խնդիրները պետք է կարգավորվեն ըստ այս օրենքի:

“Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին”

ՀՀ օրենք /04.03.1996թ./

Սույն օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական եւ ֆինանսական հիմունքները:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն նախագծի շրջանակներում նախատեսվող գործունեությունների աշխատանքների կազմակերպման ժամանակ աշխատողների և մերձակա բնակչության առողջության ապահովման խնդիրները կարգավորվում են սույն օրենքով:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք

Օրենքը ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին: Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը: .

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն նախագծի իրականացման ընթացքում պատմամշակութային արժեքների հետ կապված բոլոր խնդիրները պետք է կարգավորվեն ըստ այս օրենքի և ՀԲ պահանջների:

Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.): Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն նախագծի տարածքներում բնական բուսականության պահպանության, միջոցառումների կատարման հարցերը կարգավորվում են այս օրենքով:

Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն նախագծի տարածքներում վայրի կենդանիների պահպանության, միջոցառումների կատարման հարցերը կարգավորվում են այս օրենքով: Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են “Թափոնների մասին” ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004): ՀՀ բնապահպանության նախարարը 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն նախագծի շրջանակներում շինարարական և կենցաղային թափոնների կառավարումը պետք է իրականացվի ըստ սույն օրենքի պահանջների:

Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության

կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն նախագծի շրջանակներում նախատեսվող գործունեությունների աշխատանքների կազմակերպման ժամանակ բնապահպանական օրենսդրության կատարումը վերահսկվելու է բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնի կողմից համաձայն սույն օրենքի դրույթների:

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006թ.):

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն նախագծի իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել “Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին” ՀՀ օրենքի դրույթներով:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2-III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”; Նշված սանիտարական նորմերով սահմանվել են արտադրական, սպասարկման և այլ տեսակի գործունեության արդյունքում առաջացող աղմուկի ազդեցության մակարդակը և ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակի ն ներկայացվող հիգիենիկ պահանջներ N

2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
Սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը սահմանում են հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները՝ հողի սանիտարական վիճակի հիգիենիկ գնահատականը, հողի որակի հսկողությունը, հողի սանիտարական վիճակի գնահատման հիմնական ցուցանիշները՝ կախված դրանց ֆունկցիոնալ նշանակությունից, հողի աղտոտվածության աստիճանից կախված հողի օգտագործման առաջարկները:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին” Հիգիենիկ նորմերը սահմանում են թրթռման դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման սահմանային թույլատրելի մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման թույլատրելի մակարդակները:

ՀՀ կառավարության 10.12.2015 թ. N 54-13 արձանագրային որոշում «ՀՀ էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036թ.) զարգացման ուղիները» հաստատելու մասին: Սույն փաստաթղթի հիմքում դրված է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ մշակված ՀՀ էներգետիկ համակարգի նվազագույն ծախսերով զարգացման ծրագիրը: Այդ ծրագիրը 2014 և 2015 թվականներին լայն քննարկման առարկա է դարձել ՀՀ կառավարությունում և Հանրային էտրիդում, շահագրգիռ գերատեսչությունների, միջազգային ֆինանսական կազմակերպությունների մասնակցությամբ:

“Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը” (հաստատվել ՀՀ նախագահի կողմից 23.10.2013թ.) Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության ապահովման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) նպատակաուղղված է ապահովելու Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգությունը՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներին համահունչ:

Էներգետիկ անվտանգությունը քաղաքական, տնտեսական, իրավական, կազմակերպական, մեթոդական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ապահովում է պետության կարիքների բավարարման համար մատչելի գներով, որակյալ և հուսալի էներգամատակարարում ամենօրյա պայմաններում, ինչպես նաև արտակարգ

իրավիճակներում և պատերազմի ժամանակ: Այս փաստաթուղթը նաև նպատակ ունի երաշխավորել, որ ՀՀ ներգրավվելու է միջազգային կազմակերպությունների, եվրամիության, Ռուսաստանի Դաշնության և ԱՄՆ կողմից կազմակերպվող տարածաշրջանային ծրագրերին և ընդգծում է էներգետիկ ռեսուրսների և վառելիքի երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի կարևորությունը:

ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր / մինչև 2040թ./

Ռազմավարական ծրագիրն ընկած է էներգետիկայի բնագավառին առնչվող բոլոր որոշումների կայացման, հարևան երկրների հետ էներգետիկայի ոլորտին առնչվող հարաբերությունների կառուցման, ավելի գլոբալ էներգետիկ շուկաներին ինտեգրման և հիմնական գործընկերների հետ հարաբերությունների հետագա զարգացման հիմքում: ՀՀ կառավարությունն էներգետիկայի բնագավառում իրականացնելու է սոցիալական, բնապահպանական և տնտեսական հավասարակշռված քաղաքականություն, առավելագույնս ներգրավելով բնակչությանն ու գործարարներին սույն ռազմավարության նպատակներին հասնելու համար:

Սույն ռազմավարությունը հիմք է հանդիսանալու էներգետիկայի բնագավառի ազգային ծրագիր-ժամանակացույցի մշակման համար, որում մինչև 2040թ. ժամանակահատվածի համար սահմանված կլինեն սույն ռազմավարության իրագործումն ապահովող առանձին թիրախային ցուցանիշներ և գործողությունների ցանկ: էներգետիկայի բնագավառի ազգային ծրագիր-ժամանակացույցը կհաստատվի մինչև 2020թ. ավարտը:

Միջազգային համաձայնագրեր

Ի լրումն վերը թվարկված նորմատիվային ակտերի, մշակվել են բնապահպանական ուղղվածության բազմաթիվ ռազմավարական, հայեցակարգային և ազգային ծրագրեր, ինչպես նաև ՀՀ կողմից ստորագրվել և վավերացվել են մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ: Ստորև բերված են ՀՀ կողմից ստորագրված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները և դրանց կարգավիճակը ՀՀ-ում:

ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները

NN	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավեր է	Ծանոթություն
1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրի ու թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1971	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.		
2	ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.)	1993	1992	1993	Վերագրանցվել ՄԱԿ, 1993
3	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.)	1994	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
4	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	2005		2002	
5	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (Ժնև, 1979թ.)	1983		1996	Վերագրանցվել ՄԱԿ, 1997
	«Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա (22.05.2001թ.)»	2003	2003	2003	
	Էվտրոֆիկացիայի և գետնամերձ օզոնի մասին արձանագրություն, (Gothenburg, 1999)		1999		
6	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո, 1991թ.)	1997		1996	Վերագրանցվել ՄԱԿ, 1997
	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	2010	2010	2011	
7	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
8	ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց ացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	Վերագրանցվել ՄԱԿ, 1999
9	«Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
	«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.)	1989		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
10	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրիուս 1998թ.)	2001	1998	2001	

4. Նախագծի այլընտրանքները, այդ թվում՝ գրոյական տարբերակը

Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում, այսինքն ընկերությունը շարունակում է իրականացնել պողպատե աղացագնդերի, թուջե և պողպատե ձուլվածքների ու դետալների, կիսապատրաստուկների արտադրությունը, որոնք օգտագործվում են հիմնականում հանքարդյունաբերության և շինարարության ոլորտներում: Այս դեպքում՝

- Բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված հնարավոր ռիսկերի կամ վտանգների ավելացում չի ակնկալվում,
- Կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնաժին ներգործություն և ճնշում չի առաջանա: Մյուս կողմից, գրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.
- Հանրապետությունում՝ համապատասխան ոլորտի, ձուլվածքների և դետալների պահանջարկի դեֆիցիտ, ինչը հետագայում կարիք կլինի լրացնել ներկրելով արտերկրներից անհամեմատ ավելի թանկարժեք հումքով,
- Նախագծի իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորությունները,
- Չի իրականացվի տեխնոլոգիական վերազինում և չեն կատարվի համապատասխան հարկային վճարումներ:

Քննարկվող տարբերակ

Քննարկվող տարբերակներից է իրականացնել տեխնոլոգիական վերազինում, պողպատե և թուջե ձուլվածքների ստացման արտադրության (15000.0տ) տարեկան արտադրողականությունը հասցնել նախագծային 50000.0տ/տարի, աշխատելով օրական 24 ժամ աշխատակարգով: <<Ձուլակենտրոն>> ԲԲԸ-ն նախագծային նշված արտադրողականությանը կարող է հասնել ընկերության ներկայումս գործող արտադրական հզորությունները օրական 24 ժամ աշխատակարգով աշխատելու դեպքում՝ պահանջվող համապատասխան քանակի հումքի առկայության դեպքում: Ստացված

մետաղական ձուլվածքի (կիսաֆաբրիկատի ստացում) հիման վրա ընկերությունը կազմակերպում է շինարարական մետաղակոնստրուկցիաների արտադրություն, որը ապահովում է ամբողջական արտադրական ցիկլ՝ վերջնական արտադրանքի ստացումով:

Այս տարբերակի առավելություններն են.

- Արտադրված համաձուլվածքը կարելի է օգտագործել բարձր տեխնոլոգիական հատկանիշներով արտադրանքի պատրաստման համար,

- Գործունեության արդյունքում լրացուցիչ տարածքների ներգրավում չի նախատեսվում,

- Նախատեսվում է ակտիվ մասնակցություն և ֆինանսական ներդրումներ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում:

Տարբերակի թերությունները՝

- գործունեությունը կառավարվում են թանկարժեք էլեկտրոնային ավտոմատ համակարգերով,

- տեխնոլոգիական գործընթացների սպասարկումը պահանջում է որակյալ անձնակազմ,

- հոսքագծերը, մանավանդ, կիրառվող թեքային զտիչները, ջրային սկրուբերները պահանջում են հաճախակի ստուգումներ և պարբերական կարգաբերումներ:

Վերլուծելով նշված տարբերակների դրական և բացասական կողմերը, առաջին հերթին բնապահպանական և սոցիալական գործոնները, ընտրվել է գործունեության ընդլայնման տարբերակը:

5. Նախատեսվող գործունեության բնութագիրը և գործունեության նկարագիր

Ներկա վիճակի նկարագրություն

<<Ձուլակենտրոն>> ԲԲԸ-ն գործում է դեռևս խորհրդային տարիներից և տեղակայված է ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի արդյունաբերական գոտում:

Արտադրական կազմակերպություններից սահմանակից է <<Գործիքաշինական>> ՍՊԸ-ին, իսկ բնակելի գոտուց հեռու է ավելի քան 1 կմ, շրջակայքում հանգստյան

գոտիներ, բուժհաստատություններ, սննդի օբյեկտներ, դպրոցներ, մանկապարտեզներ, անտառներ, հանդակներ առկա չեն:

Ձեռնարկությունը պողպատի և թուջի ջարդոններից ստանում է պողպատե և թուջե ձուլվածքներ: Ընկերությունը արտադրողականությունը տարեկան 15,000.0տ է իսկ դրվածքային հզորությունը 50,000.0տ:

Ձեռնարկության աշխատանքային օրերի քանակը՝ 260 օր/տարի

Աշխատանքային գրաֆիկը՝ 8 ժամյա

Աշխատողների քանակը՝ 75 մարդ

Ընդհանուր տարածքը կազմում է 24.2հա, որից՝

- ▶ Արտադրական տարածքի մակերեսը – 2.6հա
- ▶ Օժանդակ տարածքների մակերեսը – 3.2հա
- ▶ Կանաչ տարածքների մակերեսը – 18.4 հա

Հաշվի առնելով միջազգային շուկայում տարեցտարի ավելացող պողպատյա ապրանքների պահանջարկը՝ 2021թ «Ձուլակենտրոն» ԲԲԸ-ն մշակեց ընկերության զարգացման պլան: Ըստ այդ պլանի ընկերությունը նպատակ դրեց ստանալ ավարտական արտադրական ցիկլը, որը հնարավորություն կտա առկա պողպատի ջարդոններից պողպատե ձուլվածքների ստացման տեխնոլոգիական ցիկլին ավելացել շինարարական մետաղակոնստրուկցիաների գլանման (прокат) տեխնոլոգիական ցիկլ: Ուստի ընկերությունում սկսեց նախապատրաստել իր արտադրական հզորությունները:

Ընկերությունում առկա է պողպատի շարունակական ձուլման (непрерывное литьё) արդյունքում ստացված քառակուսի կիսապատրաստուկների (полуфабрикаты квадратного поперечного сечения полученные непрерывным литьем из нелегированной стали) հոսքագիծ, որի միջազգային անվանումը՝ CCM – continuous casting machine: Նշված քառակուսի պողպատյա կիսապատրաստուկները համարվում են ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 7208 ծածկագրի ներքո բնութագրվող ապրանքատեսակ: Ընկերության համար նպատակայի են հանդիսանում քառակուսի կիսապատրաստուկների հետևյալ բնութագրիչները.

Չափս՝

130x130x4,000 մմ,

130x130x6,000 մմ,

150x150x4,000 մմ

150x150x6,000 մմ,

Պողպատի տեսակը՝ 3սո և 5սո

Պողպատյա կիսապատրաստուկները համապատասխանում են տեղական և միջազգային բոլոր տեխնիկական նորմերին (ГОСТ, ТУ итд.):

Պողպատյա կիսապատրաստուկների ստացմանն համար ընկերությունը ունի 1 հատ, 2 թոնիրով (մետաղի հալման հոր), 10 տոննա արտադրողականությամբ Inductoterm մակնիշի ինդուկցիոն վառարան, շարունակական ծուլման մեքենա, հալոցք տեղափոխելու համար 20 տոննա տարողությամբ ամբարձիչ, մետաղի ջարդոն տեղափոխող հատուկ տեսակի չանչային ամբարձիչ, մեծ քանակի պողպատի ջարդոն:

Ամբողջությամբ կապիտալ վերանորոգվել է արտադրական շենքը, պահեստներ, ենթակառուցվածքային կարևորագույն հանգույցներ: Ներդրումային ծրագրի կապիտալ ծախսերը կկազմել են մոտ 1.5 միլիարդ ՀՀ դրամ, իսկ հավաքած պողպատի ջարդոնի ներկայիս պաշարը արդեն գերազանցում 26-28 հազար տոննա:

Ներդրումային ծրագրով նախատեսում է տարեկան արտադրել մոտ 50,000 տոննա պողպատի շարունակական ծուլման արդյունքում ստացված քառակուսի կիսապատրաստուկներ և սրա հիման վրա ստանալ մետաղակառուցիվներ՝ ամրան (арматура), անկյունակ (угольник), մետաղական լար (գլոցուկ - катанка):

Ընկերության աշխատողների թվաքանակը ներկայիս 87 աշխատակցից կդառնա 187 աշխատակից:

Պողպատի անընդհատ գլանման գործարանի/հոսքագծի (непрерывный прокатный стан) կառուցման նախատեսվող ներդրումային ծրագիրը

Պողպատի շարունակական ծուլման արտադրամասի դրվածքային հզորության հիման վրա՝ որոշում է կայացվեց ստանալ վերջնական արտադրատեսակներ և ձեռք բերել համապատասխան սարքավորումները: Այս գաղափարի կյանքի կոչելը ենթադրում է պողպատի գլանման գործարանի (прокатный стан) ներդրումային ծրագրի իրականացումը:

Գլանման գործարանի պատրաստի արտադրանք են հանդիսանալու հետևյալ տեսակային և ձևավոր գլանվածքների (сортовой прокат и фасонный прокат) ապրանքները.

- Պողպատյա ամրաններ (арматура рифленая стальная) հետևյալ տրամագծերով (մմ)՝ 10, 12, 14, 16, 18, 20, 25, 32,
- Պողպատյա քառակուսի (квадрат стальной, или металлический сплошной профиль квадратного сечения толщиной от 10 до 30 миллиметров без полостей внутренней области) հետևյալ կողմերով (մմ)՝ 10, 12, 14, 16, 20, 25, 30,
- Պողպատյա անկյունակ (уголок равнополочный) հետևյալ բնութագրիչներով (մմ)՝ 25x3-4, 30x3-4, 35x3-4, 40x4-5, 45x4-5, 50x4-6, 63x5-6,
- Պողպատյա շերտաձող (полоса стальная) հետևյալ բնութագրիչներով (մմ)՝ 40x4, 45x4-5, 50x4-6, 55x4-6, 60x4-6, 63x5-6, 65x5-6,
- Պողպատյա ամրալարեր (катанка стальная) հետևյալ տրամագծերով (մմ)՝ 6, 8: Այս ապրանքատեսակը նախատեսված է արտադրել հետագայում, որի համար լրացուցիչ ներդրում կպահանջվի:

Համաձայն ՀՀ օրենսդրության ընկերությունը ունի Սահմանային մթնոլորտային արտանետումների թույլտվություն: Ընկերությունում մթնոլորտի աղտոտման աղբյուրներ են հանդիսանում՝ ձուլման երկու տեղամասերի ինդուկցիոն երկու վառարանները, թրծման տեղամասի գազային վառարանները և ջեռուցման ու տաք ջրամատակարարման համար տեղադրված կաթսայի աշխատանքի հետևանքով առաջացած արտանետումները, տվյալները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Ինդուկցիոն վառարանները աշխատանքի ընթացքում հովացվում են ջրի անընդհատ հոսքի պայմաններում: Ձուլման գործընթացում արտանետվում են՝ երկաթի օքսիդ 9.4 գ/կգ, ազոտի օքսիդներ 0.24 գ/կգ, ածխածնի օքսիդ 1.2 գ/կգ:

Թրծման տեղամասում տեղադրված է սալակավոր խցիկային թրծման վառարան և անցումային չորացնող վառարան, որոնք աշխատում են բնական գազով, պահուստային վառելիք նախատեսված չէ: Գազի տարեկան ծախսը երկու վառարաններում միասին կազմում է 990000մ³/տարի: Արտանետվում են՝ ազոտի և ածխածնի օքսիդներ, որոնք հաշվարկվել են համապատասխանաբար՝ 2.15կգ/1000.0մ³ և 12.9կգ/1000.0մ³ գործակիցներով:

Ջեռուցման և տաք ջրամատակարարման համար վարչական շենքում տեղադրված է 1 ջրատաքացուցիչ կաթսա 5մ բարձրությամբ և 0.2մ տրամագծով: Գազի ծախսը 10000.0մ³/տարի է: Արտանետվում են ազոտի և ածխածնի օքսիդներ, որոնք հաշվարկվել են համապատասխանաբար՝ 2.15կգ/1000.0մ³ և 12.9կգ/1000.0մ³ գործակիցներով:

Ձեռնարկության ընդհանուր արտանետումների բնութագիրն ու կազմը

Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումը	
	գ / վրկ	տ/տարի
Երկաթի օքսիդ	4.471	141.0
Ածխածնի օքսիդ	1.71713	30.9
Ազոտի օքսիդներ	0.30505	5.75

Կատարվել է մթնոլորտն աղտոտող նյութերի աղբյուրների գույքագրում: Ըստ գույքագրման արդյունքի ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները կազմվել և հաշվարկվել են ԳՕՍՏ 17.2.3.02-2014 -ի պահանջներին համապատասխան և բերված են աղյուսակներում: Հաշվարկները կատարվել են «Տարբեր արտադրությունների կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդիկան» ժողովածուի հիման վրա:

Նստեցման անչափելի գործակիցն ընդունվում է՝ գազանման վնասակար նյութերի և մանր դիսպերսության աերոզոլների համար, որոնց նստեցման կարգավորված արագությունը չի գերազանցում 3-5 սմ/վրկ՝ 1, խոշոր դիսպերսության փոշու համար մաքրման բացակայության դեպքում՝ 3, որսման դեպքում՝ 2 :

ՄԹԱ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ

աղյուսակ 3

Արտադրութիւն, արտադրամաս	Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները			Աշխատաժամը տարում		Արտանետման աղբյուրների անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգաթիվը	
	Անվանումը		Քանակը								
		ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Ձուլման տեղամաս	Ինդուկտոթերմ I-832	1		8760		անկազմակերպ		1		1	
	ինդուկցիոն ИТЧ 10	1		8760		անկազմակերպ		1		2	
Թրծման տեղամաս	Սայլակավոր խցիկային թրծման անցումային չորացնող վառարան	2		3120		խողովակ		2		3	
Ջրատաքացուցիչ կաթսա	Ջեռուցում և տաք ջրամատակարարում	1		3840		խողովակ		1		4	

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվ		Աղբյուրի բարձ- րությունը, մ		Տրամագիծը, մ		Գազաօդային խառնուրդի պարամետրերը արտանետման աղբյուրի ելքում					
						արագությունը մ/վրկ		Ծավալը մ³/վրկ		ջերմաստիճանը	
ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ
11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
1		18		6		50		1413.7		25	
2		18		6		50		1413.7		25	
3		20		0.3		2*30		4.24		150	
4		5		0.2		10		0.3142		80	

ՆՎ – ներկա վիճակ Հ – հեռանկար

Աղբյուրի կարգաթիվը		Կոորդինատները քարտեզում, մ				Գազերը մաքրող սարքերի անվանումը		Մաքրման ենթակա նյութերը		Մաքրման միջին շահագործման աստիճանը	
		կետային աղբյուրի, աղբյուր. խմբի կենտրոնի, գծային աղբ. 1-ին ծայրի		գծային աղբյուրի 2 - րդ ծայրի				Ապահովվածութ յան գործակիցը %		Մաքրման առավելագույն չափը, %	
Ն.Վ.	Հ.	X ₁	Y ₁	X ₂	Y ₂	Ն.Վ.	Հ.	Ն.Վ.	Հ.	Ն.Վ.	Հ.
11	12	23	24	25	26	27	28	29	30	31	32
1		250	550								
2		250	500								
3		125	510								
4		120	650								

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգա թիվը		Նյութի անվանումը	Աղտոտող նյութերի արտանետումները						ԱԹԱ հանելու տարին
			Ն.Վ			Հ (ՍԹԱ)			
			գ/լ	մգ/մ³	տ/տարի	գ/լ	մգ/մ³	տ/տարի	
Ն.Վ	Հ		34	35	36	37	38	39	40
11	12	33							
1		Երկաթի օքսիդ Ազոտի օքսիդներ /երկօքսիդի հաշ./ Ածխածնի օքսիդ	2.2355գ 0.057գ 0.2854	1.58 0.040 0.20	70.5 1.8 9.0	2.2355գ 0.057գ 0.2854	1.58 0.040 0.20	70.5 1.8 9.0	2023
2		Երկաթի օքսիդ Ազոտի օքսիդներ /երկօքսիդի հաշ./ Ածխածնի օքսիդ	2.2355 0.057գ 0.2854	1.58 0.040 0.20	70.5 1.8 9.0	2.2355 0.057գ 0.2854	1.58 0.040 0.20	70.5 1.8 9.0	2023
3		Ազոտի օքսիդներ /երկօքսիդի հաշ./ Ածխածնի օքսիդ	0.1895 1.137	45.1 270.7	2.1285 12.771	0.1895 1.137	45.1 270.7	2.1285 12.771	2023
4		Ազոտի օքսիդներ /երկօքսիդի հաշ./ Ածխածնի օքսիդ	0.00155 0.00933	4.965 29.6	0.0215 0.129	0.00155 0.00933	4.965 29.6	0.0215 0.129	2023

6. Ձեռնարկության ընդհանուր արտանետումների բնութագիրն ու կազմը /հեռանկարում 50000տ/տարի/

Մթնոլորտային արտանետումներ;

Ինդուկցիոն վառարանները աշխատանքի ընթացքում հովացվում են ջրի անընդհատ հոսքի պայմաններում: Ձուլման գործընթացում արտանետվում են՝ երկաթի օքսիդ 9.4 գ/կգ, ազոտի օքսիդներ 0.24 գ/կգ, ածխածնի օքսիդ 1.2 գ/կգ:

Թրծման տեղամասում տեղադրված է սայլակավոր խցիկային թրծման վառարան և անցումային չորացնող վառարան, որոնք աշխատում են բնական գազով, պահուստային վառելիք նախատեսված չէ: Գազի տարեկան ծախսը երկու վառարաններում միասին կազմում է 3300000մ³/տարի: Արտանետվում են՝ ազոտի և ածխածնի օքսիդներ, որոնք հաշվարկվել են համապատասխանաբար՝ 2.15կգ/1000.0մ³ և 12.9կգ/1000.0մ³ գործակիցներով:

Ձեռուցման և տաք ջրամատակարարման համար վարչական շենքում տեղադրված է 1 ջրատաքացուցիչ կաթսա՝ 5մ բարձրությամբ և 0.2մ տրամագծով ծխատարով: Գազի ծախսը 10000.0մ³/տարի է: Արտանետվում են՝ ազոտի և ածխածնի օքսիդներ, որոնք հաշվարկվել են համապատասխանաբար՝ 2.15կգ/1000.0մ³ և 12.9կգ/1000.0մ³ գործակիցներով:

Հեռանկարում ջեռուցման և տաք ջրամատակարարման համար գազի ծախսի փոփոխություն չի նախատեսվում:

Ձեռնարկության ընդհանուր արտանետումները վերազինման արդյունքում /հեռանկարում 50000տ/տարի/

Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումը	
	գ / վրկ	տ/տարի
Երկաթի օքսիդ	14,903	469,989
Ածխածնի օքսիդ	1.71713	30.9
Ազոտի օքսիդներ	0.30505	5.75

մեքենայական հաշվարկի բնութագիրը

Մթնոլորտում վնասակար նյութերի ցրվածության հաշվարկները կատարելու համար ճշգրտված և ուղղված տվյալների հիման վրա կազմվել են ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները: Վնասակար նյութերով մթնոլորտի աղտոտվածության

հաշվարկը կատարվել է «Էրա» մեքենայական ծրագրով: Գետնամերձ խտությունների բաշխման որոշումը կատարվել է 8364 Բ 4920 մ ուղղանկյունում, 492մ քայլով:

Օդերեվութաբանական բնութագրերը, ցրման պայմանները որոշող գործակիցները

Ցրման պայմանները որոշող օդերևութաբանական բնութագրերը և գործակիցները ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Սահմանային թույլատրելի առավելագույն միանվագ խտությունները /կոնցենտրացիաները/ վերցված են ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված ցանկից:

ԱՂՅՈՒՍԱԿ 4

Բնութագրերի անվանումը	մեծությունը
Մթնոլորտի ստրատիֆիկացիայից կախված գործակիցը	200
Տեղանքի ռելյեֆի գործակիցը	1.25
Տարվա ամենատաք ամսվա միջին առավելագույն ջերմաստիճանը	28.4
Միջին տարեկան <<քամիների վարդը>> %-ով	
Հյուսիս	19
Հյուսիս-արևելք	40
Արևելք	13
Հարավ-արևելք	2
Հարավ	5
Հարավ-արևմուտք	8
Արևմուտք	6
Հյուսիս-արևմուտք	7
Քամու բազմամյա միջին արագությունը(/մ/վ), որը հնարավոր է 20 տարին մեկ անգամ(5% ապահովվածությամբ)	3.5 մ/վրկ
Քամու բազմամյա միջին առավելագույն արագությունը(/մ/վ), որը հնարավոր է 20 տարին մեկ անգամ(5% ապահովվածությամբ)	24 մ/վրկ

Վնասակար նյութերի ցրման հաշվարկի հակիրճ արդյունքները

Նյութի անվանումը	Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիան մգ/մ ³		ՍՊԳ 1000մ	բնական գոտի բնական գոտին հեռու է ավելի քան 1կմ
	առանց ֆոնի			
երկաթի օքսիդ	0.18474774 ՍԹ-Կ 0.0073899 մգ/ մ ³	0.18474774 ՍԹ-Կ 0.0073899 մգ/ մ ³	0.18474774 ՍԹ-Կ 0.0073899 մգ/ մ ³	
Ածխածնի օքսիդ	0.0041691 ՍԹ-Կ 0. 0208455 մգ/ մ ³	0.1641691 ՍԹ-Կ 0.8208457մգ/մ ³	0.1641691 ՍԹ-Կ 0.8208457մգ/մ ³	
Ազոտի օքսիդներ	0.027018 ՍԹ-Կ 0.0054036մգ/ մ ³	0.0304518 ՍԹ-Կ 0.0060904մգ/մ ³	0.0304518 ՍԹ-Կ 0.0060904մգ/մ ³	

մթնոլորտում վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի արդյունքները

Մթնոլորտում վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի արդյունքները ներկա վիճակի և հեռանկարի համար ցույց են տալիս, որ սահմանային թույլատրելի խտության գերազանցում չի դիտվում ոչ մի նյութի համար, այդ իսկ պատճառով վնասակար նյութերի համար սահմանված նորմատիվները առաջարկվում է ընդունել որպես ՍԹԱ :

Վնասակար նյութերի համար սահմանված նորմատիվների առաջարկները ներկայացված են աղյուսակ 6-ում:

ՍԹԱ նորմատիվներ հասնելու միջոցառումների ծրագիր

ԱՂՅՈՒՍԱԿ 5

NN ը/Կ	Միջոցառման անվանումը և աղտոտման աղբյուրի համարը	Իրականացման ժամկետը	Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը մինչև միջոցառումը		Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը միջոցառումն իրականացնելուց հետո	
			գ/վրկ	տ/տարի	գ/վրկ	տ/տարի

Ձեռնարկության արտանետումները չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, հեևապես արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում՝ այդ պատճառով աղյուսակ 5-ը չի լրացվել:

Անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու Ձուլակենտրոն ԲԲԸ-ի չափաքանակներ/ արտանետման թույլտվություններ/

ԱՂՅՈՒՍԱԿ 6

Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումը		Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումը	
	գ / վրկ	տ/տարի		գ / վրկ	տ/ տարի
Երկաթի օքսիդ	4.471	141.0			
Ածխածնի օքսիդ	1.71713	30.9			
Ազոտի օքսիդներ /երկ-օքսիդի հաշվարկով/	0.30505	5.75			

կազմակերպչական և տեխնիկական միջոցառումներ անբարենպաստ


կլիմայական պայմանների ժամանակ

Անբարենպաստ եղանակի դեպքում արտանետումների կարգավորման միջոցառումները կրում են կազմակերպչական-տեխնիկական բնույթ և գործնականորեն ընդգրկում են վնասակար նյութերի արտանետումների բոլոր աղբյուրները:

1. Թույլ չտալ սարքավորման գերբեռնված աշխատանք
2. Խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին
3. Սահմանափակել վառելիքի մատկարարումը կաթսաներին
4. Չդատարկել և չբեռնավերել հեշտ բռնկվող և այրվող հեղուկներ

5. Վնասակար նյութերի արտանետումների քանակի մեծացման դեպքում հարկ է անմիջապես դանդաղեցնել կամ ժամանակավորապես դադարեցնել տվյալ սարքավորման աշխատանքը:

Արտանետման աղբյուրներ



ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մետաղի հալեցման պրոցեսում բովախառնուրդի մեջ եղած անախտան նյութերը խարամի տեսքով հավաքվում են հալված մետաղի մակերևույթին և առաջանում է խարամ: Խարամը ենթակա է հեռացման, հակառակ դեպքում կխոչնդոտի որակյալ ձուլվածքի ստացմանը: Հեռացված խարամն իրենից ներկայացնում է պինդ թափոն՝ Էլեկտրապլառարանային ֆերոսիլիցիումի խարամ՝ 4 դասի (31201810 01004):

Կադապարախառնուրդներից ձուլվածքների մաքրման, եզրահատման ու լցոնային ձուլակտորներից անջատման պրոցեսում կադապարախառնուրդի մի մասը, որը խիստ վառված և փոշիացած լինելու պատճառով հետագա օգտագործման համար պիտանի չէ, առանձնացվում և հեռացվում է արտադրական ցիկլից, որպես մաքրող և ավազաշիթային սարքավորումների ավազի մնացորդներ պինդ թափոն: Համաձայն ՀՀ օրենսդրության ընկերությունը ունի իր մոտ առաջացող թափոնների գոյացման նորմատիվներ և դրանց տեղադրման սահմանաքանակների թույլտվություն:

<<Ձուլակենտրոն>> ԲԲԸ-ում անձնագրավորված թափոնների բնութագիրը .

Թափոնի անվանումը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Արտադրություն (անվանումը)	Թափոնի վտանգա- վորության դասը
1	2	3	5
Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան	3533010013011	Տարածքների լուսավորություն	1
Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	9211010013012	Ավտոմեքենաների շահագործում	2
Իրենց սպառողա-կան հատկությունները կորցրած շարժիչային յուղերի մնացորդներ	5410030102033	Շարժիչների շահագործման աշխատանքներ	3
Էլեկտրավառարանային ֆերոսիլիցիումի խարամ	3120181001004	ձուլման արտադրություն	4
Կադապարային խառնուրդի թափոններ	3140250001994	ձուլման արտադրություն	4
Եռակցման խարամ	3140480001994	Եռակցման աշխատանքներ	4
Բանեցված օդաճնշիչ դողեր	5750020013004	Իրենց սպառողական հատկությունները կորցրած պատրաստի իրեր	4
Տարատեսակ փայտի մշակումից առաջացած եզրակտրտվածք	1719010601004	Փայտամշակում	4

<<Ձուլակենտրոն>> ԲԲԸ-ում առկա է թափոնների ժամանակավոր կուտակման բաց տիպի մեկ հրապարակ՝ մոտ 1000մ² օգտագործվող մակերեսով: Ժամանակավոր

տեղադրման տարածքը առանձնացված է և համապատասխանում է բնապահպանական հետևյալ նորմերին.

- a. Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը հասցված է նվազագույնի
- e. Բացառվում է մարդու առողջության վրա լոկալ ազդեցության ռիսկը
- f. Անհասնաելի է կողմնակի մարդկանց համար
- g. Հրդեհառաջացման ռիսկը գրեթե զրոյացված է
- h. Տարածքի աղտոտումը այլ պինդ թափոններով բացառվում է
- i. Հարմարեցված է ավտոփոխադրամիջոցներով թափոնների տեղափոխման:

Գոյացող թափոնների ցանկը

Թափոնի անվանումը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Արտադրություն (անվանումը)	Թափոնի վտանգավոր հատկությունները	Թափոնի վտանգավորության դասը	Քանակությունը մ ³ /տ/տարի
1	2	3	4	5	6
Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան	3533010013011	Տարածքների լուսավորություն	Պարունակում է ծանր մետաղ Hg	1	0,1 տ/տարի
Ընդամենը Վտանգավորության 1-ին դաս					0,1 տ/տարի
Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	92110100 13 01 2	Ավտոմեքենաների շահագործում	Պարունակում է ծանր մետաղ Pb և էլեկտրոլիտ	2	0,5 տ/տարի
Ընդամենը Վտանգավորության 2-րդ դաս					0,5 տ/տարի
Իրենց սպառողական հատկությունները կորցրած շարժիչային յուղերի մնացորդներ	5410030102033	Շարժիչների շահագործման աշխատանքներ	Տարբեր ածխաջրածիններ և անօրգանական նստվածքներ	3	1,2 տ/տարի
Ընդամենը Վտանգավորության 3-րդ դաս					1,2 տ/տարի
Էլեկտրավառարանային ֆերոսիլիցիումի	3120181001004	ծովման		4	2028 տ/տարի

խարամ		արտադրություն			
Կադապարային խառնուրդի թափոններ	314025000199 4	ծովյան արտադրություն		4	3060 տ/տարի
Եռակցման խարամ	314048000199 4	եռակցման աշխատանքներ		4	0,8 տ/տարի
Բանեցված օդանշիչ դողեր	5750020013004	Իրենց սպառողական հատկությունները կորցրած պատրաստի իրեր		4	4,5 տ/տարի
Տարատեսակ փայտի մշակումից առաջացած եզրակտրտվածք (օրինակ ^ա եզրակտրտվածք պարունակող փայտե-տաշեղային և/կամ փայտե- թելքավոր սալիկների)	1719010601004	Փայտամշակում		4	0,5 տ/տարի
Ընդամենը Վտանգա- վորության 4-րդ դաս					5093,8 տ/տարի
Ընդամենը Վտանգա- վորության 5-րդ դաս					
Ընդամենը					5095,6 տ/տարի

Ընկերությունը ունի հաստատված Զրոգտագործման և Զրահեռացման անհատական նորմաներ՝ ըստ ՀՀ օրենսդրության պահանջների :

<<Ձուլակենտրոն>> ԲԲԸ-ի թարմ խմելու ջրի մատակարարումը իրականացվում է պայմանագրային հիմունքներով, Չարենցավան քաղաքի ջրամատակարարման ցանցից, Վեդլիա Զուր ընկերության հետ առկա պայմանագրի հիման վրա:

Զրոգտագործող ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն ոռոգման ջրատարից, վերցրված ջուրն օգտագործվում է կանաչ տարածքների ոռոգման նպատակով: Նախատեսվում է հետագա տարիներին սեփական տեխնիկական ջրի աղբյուր ունենալ:

Զրի հիմնական սպառողներն են.

1. Հիմնական տեխնոլոգիական պրոցեսներ՝
 - 1.1 մետաղի մեխանիկական մշակման հաստոցների հովացման համակարգ,
 - 1.2 էլեկտրո-ինդուկցիոն ձուլարանների հովացման համակարգ,
 - 1.3 ձուլվածքից ստացված դետալների կոփման համակարգ:
2. Օժանդակ ստորաբաժանումները՝
 - 2.1 տրանսպորտային տեղամաս,
 - 2.2 կոմպրեսորների համակարգի շահագործում:
3. Տնտեսակենցաղային նպատակներ՝
 - 3.1 սանիտարահիգիենիկ կարիքներ,
 - 3.2 հատակի լվացում և տարածքի ջրում,
 - 3.3 կանաչ գոտիների ոռոգում:

Ձեռնարկության կոյուղու համակարգը սկիզբ է առնում վարչատնտեսական շինության տարածքից, անցնում է գործարանի տարածքով, որից հետո ուղղվում է դեպի Չարենցավանի քաղաքային կոյուղու համակարգ:

Նպատակը

Համաձայն տեխնոլոգիական վերազինման նախատեսվող գործունեության նպատակն է պողպատե և թուջե ձուլվածքների ստացման արտադրությունը հասցնել նախագծային 50,000.0տ/տարի: Ձուլման համար գործարկվում են 1 հատ Ինդուկտոթերմ I-832 տիպի և 1 հատ ՄԿ-10 տիպի ինդուկցիոն վառարաններ՝ յուրաքանչյուրը 10տ հզորության, որոնց դրվածքային հզորությունը 24 ժամյա աշխատանքային գրաֆիկի դեպքում կարող է կազմել 50.0հազ տոննա տարեկան: Ինդուկցիոն վառարանները աշխատանքի ընթացքում հովացվում են ջրի անընդհատ հոսքի պայմաններում:

<<Ձուլակենտրոն>> ԲԲԸ-ն նախագծային նշված արտադրողականությանը հասնելու համար ընկերության ներկայումս գործող արտադրական հզորությունները բավարարում են օրական 24 ժամ աշխատակարգով աշխատելու դեպքում՝ պահանջվող համապատասխան քանակի հումքով ապահովելու դեպքում:


Օգտագործվող հումք

Նախատեսվող գործունեության համար հիմնական հումք են հանդիսանում՝

- 1) Պողպատի ջարդոնը,
- 2) Թուջի ջարդոնը,
- 3) Սեփական արտադրության հետադարձը,
- 4) Ֆերոհամաձուլվածքները (ֆեռոմանգան, ֆեռոքրոմ, ֆեռոսիլիցիում և այլն),
- 5) Կվարցային ավազը,
- 6) Կավը:

7. Տեխնոլոգիական գործընթացները

<<Ձուլակենտրոն>> ԲԲԸ -ն մետալուրգիական գործարան է, որտեղ արտադրվում է՝ պողպատե և թուջե ձուլվածքներ: Արտադրական գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ սխեմայի տեսքով՝



Այս սխեմային զուգահեռ ընկերությունում առկա է նաև Պողպատյա աղացող գնդերի արտադրության, որի տեխնոլոգիական բնութագիրը ներկայացված է էջ 50-ում:

Մեքանիզմների հալեցման պրոցեսը ինդուկցիոն հնոցում

Ձեռք բերված մետաղի ջարդոնները /ԱՏԳԱԱ ծածկագիր՝ 72042900000/ տեղափոխվում և թափվում են ինդուկցիոն հնոցի մեջ: Մոտավորապես մեկ ժամ հետո հնոցում գոյանում է ձուլված նյութ, որի ջերմաստիճանը և քիմիական բնութագրերը վերլուծման են ենթարկվում լաբորատոր ուսումնասիրության արդյունքում: Յթ շինարարական միջազգային նորմերով ձուլակտորներ արտադրելու նպատակով՝ ըստ լաբորատոր արդյունքների վերլուծության, ձուլված նյութին ավելացվում է մանգան, սիլիցիում և այլ հավելանյութեր: Այս փուլում՝ 1670-1700°C աստիճանի ջերմության հասած, ձուլված նյութը լցվում է փաթիլի մեջ, որը նախօրոք հասցվել է 1000°C աստիճանի ջերմության:

Ինդուկցիոն վառարաններ;

Կազմակերպությունում կա երկու հատ 10 տոննայանոց էլ. ինդուկցոն տիպի վառարան:

Ինդուկցիոն վառարան №1- «Ինդուկտոտերմ» Հնդկաստանի արտադրության, № I-832, գտնվում է ձուլման թիվ 5 արտադրամասում:

Արտադրամասում կա հեռախոս, ծայնային կապ:

- Վառարանը հանդիսանում է էլեկտրական սարքավորում:
- Վառարանը գտնվում է ձուլման № 5 արտադրամասում և ապահովված է տեխնոլոգիական գործընթացը:
- № I-832 10 տն էլ.ինդուկցոն վառարանը նախատեսված է սև մետաղի ջարդոն հալման համար և աշխատում է էլ.ինդուկցիոն սկզբունքով:
- Վառարանը շահագործվում է անվտանգության կանոնների խստագույն պահպանման կանոնակարգով: Սարքը գրացված է ԱՎՕ-ների ռեեստրում: Այն ունի շահագործման փաստաթղթեր՝ տեխնիկական անձնագրեր

Արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնաժին վթարների կամ արտադրական պատահարների ռիսկի վերլուծություն

- № I-832 10 տն էլ.ինդուկցոն վառարանը բավարարում է կանոնակարգի պահանջներին:
Նրա ընդհանուր ծավալը կազմում է 10 տ:
Աշխատանքային լարումը՝ 570 վ,
հաճախականությունը՝ 50 հց:
- Էլ.ինդուկցոն վառարանը բավարարում է՝
էլեկտրոանվտանգության պահանջներին:
 - Վթարային իրադրություն կարող է լինել, եթե ջրի պոմպը չաշխատի:
- Մարդկային գործոնը կամ երեսպատման ճաքերը, որոնք կարող են առաջանալ օբյեկտի ֆիզիկական և բարոյական մաշվածության արդյունքում, նրանում թաքնված դեֆեկտների ի հայտ գալու պատճառով և ոչ ճիշտ շահագործումից:
- Անվտանգ սպասարկման և աշխատանքային ռեժիմի պայմանների ապահովման դեպքում այս կարգի անսարքությունները կարելի է կանխել:

- Էլ.ինդուկցոն վառարանը տեղադրված է առանձին տեղամասում, հարակից տարածքում մարդկային կուտակումներ չկան, որը փոքրացնում է ռիսկի գնահատականը
- Էլ.ինդուկցոն վառարանը, վթարների չենթարկելու նպատակով, պահվում է խիստ հսկողություն տակ: Առանց հսկողության չթողնել ջրահովացման համակարգը
- Արգելվում է աշխատանքի ընթացքում մոտենալ ինդուկցիոն գալարներին, տրանսֆորմատորին, ինչպես նաև կոնդենսատորային համակարգին
- Էլ.ինդուկցոն վառարանի վերանորոգումը արգելվում է երբ այն գտնվում է լարման տակ
- Չշահագործել վառարանը երբ չեն աշխատում՝ ղեկավարման վահանակը, ջրահովացման համակարգը, հիդրավլիկ համակարգը, կոնդենսատորային համակարգը,
- Արգելվում է շահագործումը առանց հողակցման (տրանսֆորմատոր, կոնդենսատորային համակարգ, պոմպեր և վառարանի զամբյուղ-շրջանակ)
- Արգելվում է եթե վառարանը սպասարկող անձը չունի անվտանգ շահագործման պատասխանատուի վկայական:

Կազմակերպությունը ունի պահակային ծառայություն և ձայնային ազդանշանում

- 10 տն էլ.ինդուկցոն վառարանի անվտանգ շահագործման պատասխանատու է Բ. Աղաբեկյանը
- Տեղամասում աշխատում է օդափոխության համակարգ, որը մաքրում է տեղամասը առաջացած ծխից և ջերմությունից
- Վառարանը կարող է աշխատել $+ 4^{\circ}\text{C} \div + 25^{\circ}\text{C}$
- Պատասխանատու անձը ամիսը մեկ անգամ ստուգում է՝ տրանսֆորմատորը, ռեակտորը, էլ.անջատիչները, պոմպերը, ինդուկտորը՝ մինչև 0,2 ՄՊԱ ճնշմամբ
- Վերանորոգումը կատարվում է մասնագիտացված վերանորոգող խմբի կողմից
- Կազմակերպության ղեկավարության կողմից եռամսյակը մեկ կազմակերպվում է դասընթացներ սպասարկող անձնակազմի հետ

Ինդուկցիոն վառան №2 - էլեկտրավառարան ինդուկցիոն տիգելային ИЧТ-10-2,5-С3

Խորհրդային արտադրության ИЧТ-10 էլ.ինդուկցոն տիպի վառարանը, որը հանդես է գալիս, որպես սև մետաղի ջարդոնի հալման վառարան գտնվում է «Ձուլակենտրոն» ԲԲԸ-ում, որը գտնվում է էլ.հալման տեղամասում:

Տեղամասում կա հեռախոս, ձայնային կապ:

- Վառարանը հանդիսանում է էլ.սարք:
- ИЧТ-10 էլ.ինդուկցոն վառարանը նախատեսված է թուջե և պողպատե ջարդոն հալելու համար: Այն աշխատում է էլ.ինդուկցիոն սկզբունքով:
- ИЧТ-10 էլ.ինդուկցոն վառարանը շահագործվում է անվտանգության կանոնների խստագույն պահպանման կանոնակարգով:
- Այն ունի շահագործման փաստաթղթեր՝ տեխնիկական անձնագրեր

Արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնաձին վթարների կամ արտադրական պատահարների ռիսկի վերլուծություն

- ИЧТ-10 էլ.ինդուկցոն վառարանը բավարարում է կանոնակարգի պահանջներին:
Նրա ընդհանուր ծավալը կազմում է 10 տ:
Աշխատանքային լարումը՝ $389 \div 1957$ վ,
հաճախականությունը՝ 50 հց:
- էլ.ինդուկցոն վառարանը բավարարում է՝ էլեկտրոտանվտանգության պահանջներին: Վթարային իրադրություն կարող է լինել, եթե ջրի պոմպը չաշխատի:
- Մարդկային գործոնը կամ երեսպատման ճաքերը, որոնք կարող են առաջանալ օբյեկտի ֆիզիկական և բարոյական մաշվածության արդյունքում, նրանում թաքնված դեֆեկտների ի հայտ գալու պատճառով և ոչ ճիշտ շահագործումից:
- Անվտանգ սպասարկման և աշխատանքային ռեժիմի պայմանների ապահովման դեպքում այս կարգի անսարքությունները կարելի է կանխել:
 - էլ.ինդուկցոն վառարանը տեղադրված է առանձին տեղամասում, հարակից տարածքում մարդկային կուտակումներ չկան, որը փոքրացնում է ռիսկի գնահատականը
 - էլ.ինդուկցոն վառարանը, վթարների չենթարկելու նպատակով, պահվում է

խիստ հսկողություն տակ: Առանց հսկողության չթողնել ջրահովացման համակարգը

- Արգելվում է աշխատանքի ընթացքում մոտենալ ինդուկցիոն գալարներին, տրանսֆորմատորին, ինչպես նաև կոնդենսատորային համակարգին
- Էլ.ինդուկցոն վառարանի վերանորոգումը արգելվում է երբ այն գտնվում է լարման տակ
- Չշահագործել վառարանը երբ չեն աշխատում՝ ղեկավարման վահանակը, ջրահովացման համակարգը, հիդրավլիկ համակարգը, կոնդենսատորային համակարգը,
- Արգելվում է շահագործումը առանց հողակցման (տրանսֆորմատոր, կոնդենսատորային համակարգ, պոմպեր և վառարանի զամբյուղ-շրջանակ)
- Արգելվում է եթե վառարանը սպասարկող անձը չունի անվտանգ շահագործման պատասխանատուի վկայական:

Կազմակերպությունը ունի պահակային ծառայություն և ձայնային ազդանշանում

- ИЧТ-10 էլ.ինդուկցոն վառարանի անվտանգ շահագործման պատասխանատու է Բ. Աղաբեկյանը
- Տեղամասում աշխատում է օդափոխության համակարգ
- Վառարանը կարող է աշխատել $+ 4^{\circ}\text{C} \div + 25^{\circ}\text{C}$
- Պատասխանատու անձը ամիսը մեկ անգամ ստուգում է՝ տրանսֆորմատորը, ռեակտորը, էլ.անջատիչները, պոմպերը, ինդուկտորը՝ մինչև 0,2 ՄՊԱ ճնշմամբ
- Վերանորոգումը կատարվում է մասնագիտացված վերանորոգող խմբի կողմից
- Կազմակերպության ղեկավարության կողմից եռամսյակը մեկ կազմակերպվում է դասընթացներ սպասարկող անձնակազմի հետ

Շարունակական Ձուլման Մեքենա (CCM)

Ձուլման նյութը անմիջապես տեղափոխվում է թանդիշի մեջ և մեկնարկում է 150*150մմ չափսերով ձուլակտորների (կիսապատրաստակ) շարունակական արտադրման պրոցեսը: Ձուլված նյութը անցնում է պղնձե կաղապարի միջով, որը

սառեցման է ենթարկվում շրջանառու ջրի օգնությամբ: Ստացված ձուլվածքը ձգվում է լիսեռների վրա և կտրատվում է 6000մմ չափսերով: Պողպատե գլանվածքը սառեցնելու նպատակով տեղափոխվում է սառեցման համակարգ և այս փուլի ավարտից հետո ավարտվում է նաև արտադրական պրոցեսը: Արդյունքում ստացվում է քառակուսի լայնական հատույթով 150մմ-ից ոչ ավելի հաստությամբ, 0.14-ից 0.22% ածխածնի պարունակությամբ, ոչ կոռոզիակայուն GRADE-3SP 150*150*6000 /ԱՏԳԱԱ ծածկագիր՝ 7207201500/ պողպատյա գլանվածք /բալվանկա/: Այս կիսապատրաստուկի ստացման նյութահումքային բալանսը ներկայացված է աղյուսակում;

Անընդհատ ձուլման եղանակով ստացվող 1 տոննա պողպատյա քառակուսի կիսապատրաստուկի համար ծախսվող հումք, նյութերի և ապրանքների նորմաներ				
1	Ձուլվածք ստանալու համար օգտագործվող ուղղակի հումք նյութեր	Նորմա	Չափ. միավոր	Մեկնաբանություններ
1	Պիտանի մետաղ (պողպատ)	1.0	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
2	Ֆերոսիլիկոմանգան	0.0100	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
3	Ֆերոսիլիցիում	0.0050	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
4	Ածխածին (գրաֆիտ)	0.0000	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
5	Երկաթի օքսիդ (Երկաթի խտահանք չազլմերացված, մին 70%) Թափոն սև մետաղի արտադրության մեջ օգտագործելու	0.0031	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
2	Ձուլվածք ստանալու համար օգտագործվող երեսպատման նյութեր	Նորմա	Չափ. միավոր	Մեկնաբանություններ
1	Հրակայուն կանաչ շաղախ	0.00025	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
2	Հրակայուն զանգված միջանկյալ շերտփի երեսպատման, 95% ալյումինի պարունակությամբ	0.005000	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
3	Հրակայուն զանգված միջանկյալ շերտփի երեսպատման, 85% ալյումինի պարունակությամբ	0.0000003	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
4	Հրակայուն զանգված միջանկյալ շերտփի երեսպատման, 65% ալյումինի պարունակությամբ	0.00033	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
5	Լցնող զանգված՝ միջանկյալ շերտփի ծայրափողակները մամլելու համար	0.00016	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
6	Խտացնող զանգված միջանկյալ շերտփի համար	0.00000	տոննա	Գտնվում է փորձարկման մեջ

7	Հրակայուն փոշի՝ միջանկյալ շերտեր երեսպատելու համար	0.00651	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
8	Ջերմամեկուսիչ փոշի պողպատի լցման և միջանկյալ շերտերի համար	0.00007	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
9	Հրակայուն թթվային լցնող զանգված	0.02743	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
10	Չեզոք (միջանկյալ) հրակայուն լցնող զանգված	0.00000	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
11	Նատրիումի սիլիկատ (հեղուկ ապակի)	0.00043	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
12	Ավազ ծայրափողակների բացերը լցնելու համար	0.00025	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
13	Ձուլարանային փոշի	0.00063	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
3	Ձուլվածք ստանալու համար օգտագործվող օժանդակ հումք նյութեր, ապրանքներ, սարքեր	Նորմա	Չափ. միավոր	Մեկնաբանություններ
1	Քսայուղ	0.0001	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
2	Յուղ հիդրավլիկ HLP-46	0.0658	լիտր	Նորմայի ճշգրտությունը +/-20%
3	Յուղ ինդուստրիալ Ի-50 (40)	0.0400	լիտր	Նորմայի ճշգրտությունը +/-20%
4	Յուղ հիդրավլիկ HLP-68	0.0667	լիտր	Նորմայի ճշգրտությունը +/-20%
5	Թթվածին 40լ բալոններով	0.9359	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
6	Արգոն 11կգ. բալոններով	0.0001	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
7	Ամրալար	0.0029	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
8	Ներկ	0.0001	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
9	Լուծիչ	0.0200	լիտր	Նորմայի ճշգրտությունը +/-20%
10	Հանքահատ մուրճի հատիչ (պիկ)	0.0074	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
11	Հանքահատ մուրճի զսպանակ	0.0022	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
12	Սև մետաղի թիթեղ վառարանի փոքր շաբլոնի համար 6x1500x6000մմ վառարանի համար	0.0094	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
13	Սև մետաղի թիթեղ մեծ շաբլոնի համար 8x1500x6000մմ լցման շերտի համար	0.00094	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
14	Դիզելային վառելիք	0.0028	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
15	Եռակցման էլեկտրոդ Φ4	0.000045	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
16	Բանվորական ձեռնոց	0.8000	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
17	Կտրող սկավառակ Φ230	0.0181	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
18	Հիդրավլիկ գլան	0.00011	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%

19	Միջանկյալ շերտիի ծայրափողակի աղյուս	0.07143	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
20	Միկանիտի գլանափաթեթ (փայլար)	0.06944	մետր	Նորմայի ճշգրտությունը +/-20%
21	Սոսինձ միկանիտի համար (փայլար)	0.00002	տոննա	Նորմայի ճշգրտությունը +/-20%
22	Շերտիի հրակայուն բնիկային բլոկ 1QC-ի համար	0.00125	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
23	Հրակայուն կերամիկական թրծած սալ շերտիի սահող մեխանիզմի	0.06250	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
24	Հրակայուն կերամիկական սնամեջ բնիկ արտաքին ծորանի	0.03125	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
25	Հրակայուն կերամիկական սնամեջ բնիկ ներքին ծորանի	0.01250	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
26	Հրակայուն կերամիկական գլխադիրներ Ø14մմ Ø15մմ միջանկյալ շերտիի	0.06250	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
27	Ջերմազույգի գլխիկ հալված մետաղի ջերմաստիճանը չափելու	0.50000	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
28	Զոնդ հալված մետաղից նմուշ վերցնելու	0.37500	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
29	Պողպատյա անկար խողովակ Φ6մմ	0.25000	մետր	Նորմայի ճշգրտությունը +/-20%
30	Պողպատյա անկար խողովակ Φ8մմ	0.25000	մետր	Նորմայի ճշգրտությունը +/-20%
31	Պողպատյա անկար խողովակ Φ10մմ	0.25000	մետր	Նորմայի ճշգրտությունը +/-20%
32	Պողպատյա անկար խողովակ Φ20մմ	0.25000	մետր	Նորմայի ճշգրտությունը +/-20%
33	Գազակտրիչ թթվածնային 1500մմ	0.00027	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
34	Ծայրակալներ գազակտրիչի	0.00133	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
35	Պղնձյա կաղապար բյուրեղարարի (150x150մմ)	0.00050	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
36	Պղնձյա կաղապար բյուրեղարարի (130x130մմ)	0.00050	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
37	Հեղյուս՝ շարունակական ձուլակտորի գլխին միացնելու համար	0.12500	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
38	Ապակեպլաստե մեկուսիչ մալուխների համար	0.00133	մետր	Նորմայի ճշգրտությունը +/-20%
39	Ապակեպլաստե ժապավեն	0.06667	մետր	Նորմայի ճշգրտությունը +/-20%
40	1 QC մեխանիզմ	0.00133	կոմպլեկտ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
41	1 QC մեխանիզմի հեղյուս-մանեկ-տափօղակ	0.00133	կոմպլեկտ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
42	1 QC մեխանիզմի կոնաձև տափօղակ	0.00022	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
4	1 QC մեխանիզմի ծայրափողակի բռնիչ	0.00022	հատ	Նորմայի ճշգրտությունը

3				+/-20%
4 4	1 QC մեխանիզմի հիդրավլիկ բլոկ (հիդրավլիկ համակարգ)	0.00133	կոմպլեկտ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
4 5	Հակամագնիսական չժանգոտվող պողպատից ալեհավաք	0.00007	մետր	Նորմայի ճշգրտությունը +/-20%
4 6	Լցնող զանգվածի գործիք պատերի համար	0.00011	կոմպլեկտ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
4 7	Լցնող զանգվածի գործիք հատակի համար	0.00011	կոմպլեկտ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
4 8	Լցնող զանգվածի գործիքի ավտոմատ կռունկ	0.00011	կոմպլեկտ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
4 9	Լցնող զանգվածի գործիքի պիեստային ցիլինդր	0.00011	կոմպլեկտ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
5 0	Կոշիկ աշխատանքային	0.00022	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
51	Շապիկ	0.00022	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%
5 2	Արտահագուստ բանվորական բամբակից	0.00022	հատ	Նորմայի ճշգրտությունը +/-20%

Պողպատե ամրանների և պրոֆիլների արտադրության տեխնոլոգիա տաք գլոցման մեթոդ

Համաշխարհային արտադրողները վաճառում են պողպատե շարունակական ձուլված քառակուսի

կիսապատրաստաուկներ, սակայն դրանք ուղղակիորեն չեն կարող օգտագործվել մեքենաների, մեխանիզմների, արտադրանքի կամ մետաղական կոնստրուկցիաների արտադրության համար: Պահանջվում




է կիսապատրաստաուկներ հետագա վերամշակում գլոցման գործարաններում: Այստեղ գլանվածքը ստանում է իր վերջնական ձևը և անհրաժեշտ ֆիզիկական, մեխանիկական և երկրաչափական բնութագրերը:

Պողպատե բոլոր կիսապատրաստաուկները սկզբում մշակվում են տաք գլանվածքով: Սա նշանակում է, որ պլաստիկ դեֆորմացիան իրականացվում է հատուկ գլանման հաստոցների վրա, այսինքն, դրանք անցնում են գլանման պտտվող հարթ կամ

պրոֆիլավորված գլանափաթեթների միջև, ինչի պատճառով նախնական մշակման ձևը փոխվում է:

Տաք գլոցման մեթոդը արտադրում է ամրակներ, որի տրամագիծը տատանվում է 8-ից 32 մմ: Այս դեպքում նյութի ջերմաստիճանը պետք է լինի ավելի բարձր, քան պողպատի վերաբյուրեղացման ջերմաստիճանը: Կոպիտ ասած, այն պետք է այնքան փափուկ լինի, որ գլոցման գլաններով դեֆորմացվի, ինչպես խմորը գրտնակով անցկացնելիս: Մետաղի ջերմաստիճանը գլոցման սկզբում գերազանցում է 1100°C , իսկ վերջում՝ առնվազն 900°C : Այդ իսկ պատճառով նման գլանվածքային պողպատը կոչվում է տաք գլանվածք:



Տաք գլոցման գործընթացը ենթադրում է տաքացվող պողպատե կիսապատրաստուկը անցկացնել գլանային բացվածքի մեջ:

Գլոցման գործարանը որպես սկզբնական նյութ օգտագործում է 130×130 -ից մինչև 150×150 մմ լայնական կտրվածքով և մինչև 12 մ երկարությամբ քառակուսի, շարունակաբար ծովված կիսապատրաստուկ: Կիսապատրաստուկի տաքացնելու համար տեղադրվում են ջեռուցման վառարաններ, որոնք տաքացած մինչև գլանման ջերմաստիճանը մեկ առ մեկ մղվում են գլանասեղանի վրա և տեղափոխվում գլանման գործարան: Կիսապատրաստուկը տաքանում է գլանման գծում գտնվող վառարանում մինչև 1250°C , այնուհետև մղվում է գլանման սեղանին: Գլանման գործարանը բաղկացած է աշխատանքային ստենդներից I նախնական, II միջանկյալ և III վերջնական խմբերից: Բոլոր խմբերը բաղկացած են տարբեր թվով ստենդներից՝ հորիզոնական կամ ուղղահայաց գլոցման գլաններով:

են,



Պատրաստի արտադրանքը կտրում են թռչող մկրատով 3–15 մ/վ արագությամբ: Սառչելուց հետո գլանվածքը ուղղվում մկրատով կամ սղոցով և


ուղարկում է փաթեթավորման:

Տաք գլցման հիմնական տեխնոլոգիական փուլերն են.

- հումքի պատրաստում և մաքրում;
- պողպատե կիսապատրաստուկի ջեռուցման ռեժիմի ընտրություն՝ կախված քիմիական կազմից և հաստությունից;
- դեֆորմացիոն երևույթների հաշվարկ (calibration);
- սառեցման ռազմավարություն;
- որակի հսկողություն;
- փաթեթավորում և պահեստավորում.

Տաք գլցման համար մետաղը տաքացնելիս հիմնական պահանջն այն է, որ ձուլակտորները համաչափ տաքացվեն երկարությամբ և հատույթով կարճ ժամանակում և էներգիայի պաշարների և հումքի նվազագույն կորուստներով, որոնց մակերեսը ծածկված է օքսիդային շերտով: Կիսապատրաստուկի տաքացումը ձևավորման սկզբում և վերջում կախված է պողպատի հալման ջերմաստիճանից և կոնկրետ տեսակի մետաղի վերաբյուրեղացումից:

Ածխածնային պողպատի տեսակների մեծ մասը տաքացվում է մինչև 1150-1200 °C մինչև գլցումը, գործընթացը պետք է ավարտվի 950-900 °C-ից ոչ ցածր ջերմաստիճանում: Այնուհետև կարևոր է ապահովել ճիշտ սառեցման ռեժիմը: Եթե այն արագ է և անհավասար, դա կհանգեցնի մետաղի ճաքերի:



Վերջնական փուլում պատրաստի արտադրանքը ենթարկվում է արտաքին զննման

և ստուգվում

համապատասխանությունը ստանդարտներին կամ տեխնիկական բնութագրերին: Ստուգվում է արտադրանքի ֆիզիկական և մեխանիկական հատկությունները,

կառուցվածքային և մակերեսային որակի չափանիշները: Ապրանքը, որն անցնում է գլոցման ամբողջական ցիկլով, պետք է մակնշվի:

Ձուլման արտադրամասի տեխնոլոգիական պրոցեսի համառոտ նկարագրությունը

Մետաղի ջարդոնի հալման արդյուքնում հալված մետաղից վերցվում է նմուշ լաբորատոր հետազոտության՝ (քիմիական և սպեկտրալ համակարգչային սարքով) բաղադրության ստուգման համար, ըստ հրահանգի ավելացվում է պահանջվող ֆեռոհամաձուլվածքները ու նյութերը, կրկին ստուգվում և լցման շերտփով (ներպատված հրակայուն աղյուսով և տեխնիկական կվալցիտով) կամրջակային ամբարձիչով տեղափոխվում է կաղապարման տեղամաս, որտեղ և տեղի է ունենում հեղուկ մետաղի լցոնումը հավաքված կաղապարարկղերի մեջձևավորվելովապագաձուլվածքը:

Ձուլվածքների ձևավորման կաղապարման պրոցեսը սկսվում է հողապատրաստման տեղամասից, որտեղ վազկանի մեջ պատրաստնում է կաղապարախառնուրդը՝ հիմնական հումք օգտագործվում է կվարցային ավազը, որպես կապակցող՝ ջրում լուծված բենտոկավը: Պատրաստի կաղապարախառնուրդը ժապավենային փոխադրիչներով տեղափոխվում է պարզարան (կաղապարախառնուրդի համասեռացման տարողություն): Վերջինիս մեջից մեկ ուրիշ ժապավենային փոխադրիչներով տեղափոխվում է կաղապարման հաստոցի վերևը տեղադրված սնուցիչով բունկեր: Կաղապարող բանվորը պատրաստի խառնուրդը դարձուկային սնուցիչով լցոնում է (նախօրոք պատրաստված և մոնտաժված ենթամոդելային սալն համապատասխան ձուլվածքի մոդելային հանդերձանքի վրա) կաղապարման հաստոցի վրա տեղադրված կաղապարարկղի մեջ և սեղմված օդով աշխատող կաղապարման հաստոցի ցնցման հաշվին ձևավորվում է ապագա ձուլվածքի կիսաձևեր: Երկու կիսաձևերը չորացվում է գազային անցումային վառարանում մոտ 30-40րոպ., հովանում, այնուհետև հավաքվում են իրար վրա՝ գամվում, տեղադրվում են լցոնման համակարգի կանգնակի վռանը և բաժակը (պատրաստված կաղապարախառնուրդով և նախօրոք չորացված):

Հավված մետաղը մինչև 1650°C ջերմաստիճան տաքացված լցման շերտփով (ներպատված հրակայուն աղյուսով և տեխնիկական կվացիտով) ամբարձիչի օգնությամբ տեղափոխվում է հավաքված կաղապարաձևերի մոտ և լցնվում: 8-12ժամ հետո լցնված կաղապարաձևերը տեղափոխվում են տեղահանման տեղատեղամաս, թափահարման ցացի օգնությամբ առանձնացվում են չորացված կաղապարախառնուրդից ձուլման համակարգից (литниковая система) և այրված ավազից (որպես թափոն, ընդհանուր զանգվածի մոտ 10 տոկ.) ձուլվածքները տեղափոխվում են քշտարման տեղամաս մաքրման՝ քանդող պնեմոմուրճով, գազահատիչով, կոտորականետ ապարատով, շրջասրոցով և այլն: Ձուլվածքների երկրաչափական չափսերը ստուգելուց և զննելուց հետո տեղափոխվում են ջերմամշակման արտադրամաս՝ ենթարկվում ջերմային մշակման համաձայն պահանջվող տեխ.պայմանների, իսկ ձուլման համակարգի ձուլուկները և չորացած կվարցային ավազը վերադարձվում համապատասխանաբար հողապատրաստման և հալման տեղամասեր, որպես երկրողական հումք հետագա օգտագործման համար :

Պողպատյա աղացող գնդերի արտադրության տեխնոլոգիական պրոցեսի համառոտ նկարագրություն

Աշխատանքը սկսվում է գլանվածքների (Ф80, Ф100 կամ Ф120 տրամագծով) դասավորությամբ թեք հարթակից: Նախօրոք հղկվում, մաքրվում են գլանվածքի վրա եղած ավելցուկ եզրերը: Գլանվածքը մատուցվում է դեպի բարձր հաճախականությամբ հոսանքով (ԲՀՀ) վառարանների հոսքագիծ: Հոսքագծի վրա կա բարձր հաճախականությամբ հոսանքով (ԲՀՀ) քսան հատ վառարան, որոնք աշխատում են անկախ իրարից և կախված է թե, որ տրամագծի գլանվածք է մատուցվում (Ф80-ի դեպքում 16 հատ, Ф100 կամ Ф120 դեպքում 20 հատ): Ինդուկտորների (գալարների) հովացումը իրականացվում է փակ համակարգով ջերմադիմացկուն (антифриз) հեղուկով: Գլանվածքի տաքացման, շիկացման (շիկանում է մինչև 1000-1050°C) ժամանակահատվածում վերջինիս վրայից պոկվում է հրաթեփ (окалина), որը հավաքվում և հետագայում օգտագործվում ձուլման արտադրությունում որպես օքսիդա-վերականգնման ռեակցիայի հումք (հավված մետաղի բաղադրության մեջ

ածխածնի քանակի կարգավորման համար): Շիկացած գլանվածքը շղթայավոր հարահոսի (конвеер) օգնությամբ մատուցվում է Գլխավոր հոլովակային հաստոցին (стан), որտեղ և ձևավորվում է ապագա գլոցված գունդը: Գլոցված և ձևավորված գունդը թրթուրավոր թեք հարահոսի օգնությամբ տեղափոխվում է դեպի զույգ պտուտակային հարահոսներ, որոնք գնդերը տեղափոխում են ջրահովարան: Շիկացած գնդերը 800-830°C ջերմությամբ ընկղմվում են շղթայավոր հարահոսով ջրահովարան ($L=10\text{մ}$, $B=1.5\text{մ}$ լայնքով), որտեղ ջրի ջերմաստիճանը տատանվում է $t=25-30^{\circ}\text{C}$ (պահպանվում է կենտրոնախույս ջրապոմպերի օգնությամբ), և հսկվում էլեկտրոնային ջերմաչափով, տեղի է ունենում կոփում (ջերմամշակում): Տաքացած ($t=50-60^{\circ}\text{C}$) ջուրը կենտրոնախույս ջրապոմպերի օգնությամբ մղվում է ջրահովարան, սառեցվում և վերադարձվում հետագա օգտագործման (փակ համակարգ): Կոփված գնդերը շղթայավոր հարահոսի օգնությամբ դուրս են բերվում ջրահովարանից մոտ 150-230°C ջերմությամբ և գլորվում դեպի $V=25\text{մ}^3$ ծավալով հորերը, որտեղ տեղի է ունենում ինքնարձակում (самосотпуск) տևողությունը՝ 16-20ժամ (կապված գնդի չափսից):

8. Նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը

Չարենցավան համայնք՝ մակերեսը 245,3կմ², բնակչությունը՝ 39318 մարդ:

Չարենցավան համայնքում ընդգրկված են հետևյալ բնակավայրերը՝

- o Չարենցավան ք.,
- o Ալափարս գ.,
- o Արզական գ.,
- o Բջնի գ.,
- o Կարենիս գ.,
- o Ֆանտան գ.:

Չարենցավան համայնքը մարզկենտրոնից գտնվում է 20.0կմ, մայրաքաղաքից 38.0կմ հեռավորության վրա:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի հունիսի 9-ի ընդունված Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին

Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ Չարենցավան, Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս, Ֆանտան համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Չարենցավան համայնքը: Չարենցավան համայնքը բազմաբնակավայր համայնք է: Համայնքի կենտրոնն է հանդիսանում Չարենցավան համայնքը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չարենցավան քաղաքային համայնքը զբաղեցնում է 557.0հա մակերես: Պատմական անվանումներ՝ Լուսավան /1947-1967թթ./, հիմնադրման ժամանակաշրջանը - 1947թ.:

Համայնքներին սահմանակից են Ալափարս, Կարենիս, Ֆանտան բնակավայրերը: Օգտակար հանածոներ չկան: Կրթական, մարզական և մշակութային հաստատություններ են

- 5 հիմնական դպրոց,
- 1 ավագ դպրոց,
- պետական քոլեջ,
- Գառզուի անվան արվեստի դպրոց,
- Ա.Խաչատուրյանի անվան երաժշտական դպրոց,
- քաղաքային գրադարան,
- Ա.Մանուկյանի անվան մարզադպրոց:

Արտադրական ձեռնարկություններն են –

1. <<Արմավտո>> ԲԲԸ,
2. <<Հաստոցաշինական գործարան>> ՓԲԸ,
3. <<Բջնի>> հանքային ջրերի գործարան ԲԲԸ,
4. <<Գործիքաշինական գործարան>> ԲԲԸ,
5. <<Ասկե Գրուպ>> ԲԲԸ,
6. <<Ձուլակենտրոն>> ԲԲԸ,

7. <<Հոլանի>> ԲԲԸ /կարի ֆաբրիկա/
Բնակչությունը հիմնականում զբաղվում է առևտրով: Հոգևոր կառույցներից է Սուրբ Փրկիչ եկեղեցին /2000թ. օգոստոս/, իսկ պատմամշակութային հուշարձաններից՝ Գանգրահեր տղայի արձանը:

Չարենցավան համայնքի Ալափարս գյուղ

Բնակչություն՝ 2407 մարդ:

Ընդհանուր տեղեկություններ

Ալափարս-Այլաբերք բնակատեղիում մարդը դեռևս ապրել է Ք.Ա.2-րդ հազարամյակում: Բնակչությունը մոտ 2500 մարդ, տարածքը՝ 32.94կմ²: Ալափարսն ունի 1 տիպային դպրոց, 1 մանկապարտեզ, 1 մշակույթի տուն: Մայրաքաղաք Երևանից գտնվում է 30.0կմ հեռավորության վրա, մարզկենտրոն Հրազդանից 20.0կմ հեռավորության վրա, Չարենցավան քաղաքից 5,5կմ հեռավորության վրա: Ալափարսը հարակից է արևելքից՝ քաղաք Չարենցավանին, հյուսիս-արևմուտքից՝ Արզական, Բջնի, հյուսիսից Սոլակ, հյուսիս-արևելքից Ֆանտան, հարավից Կարենիս, հարավ-արևմուտքից Քարաշամբ և Թեղենիք գյուղերին:

Ալափարսում մարդն ապրել է դեռևս երրորդ հազարամյակում, որի վառ ապացույցն է «Սանգյառ» ամրոց-բնակատեղին: Ալափարսը հիմնադրվել է 470 թվականին: 17-րդ դարում գյուղն ամայացել է, ապա վերաբնակեցվել 1830թ. Խոյից, Մակուից, Վանից, Ալաշկերտից ներգաղթած հայերով: Առաջինը ժամանել է Խոյեցիների քարավանը 60 տուն 200 շնչով և բնակություն հաստատել գյուղի ներքին թաղամասում, իսկ երկրորդը Մակուի Շահբուլաղ գյուղի քարավանը 40 տուն՝ 150 շունչ և հաստատվել վերին աղբյուրամերձ թաղամասում:

20-րդ դարում Ալափարսի դերը մեծ է եղել Հայաստանի կյանքում: 1950-ական թվականներին շահագործման է հանձնվել Ալափարսի պոմպակայանը, որը ավելի քան կես դար ղեկավարել է Ավետիք Ավետյանը: Ալափարս աղբյուրի քաղցրահամ ջուրը հայտնի է Հայաստանում և արտերկրում «Նոյ» աղբյուրի ջուր անունով:

Ալափարսը հայտնի է միջնադարյան հուշարձաններով, որոնք ունեն երկարամյա պատմություն: Այստեղ են գտնվում Սուրբ Վարդան եկեղեցին կառուցված 5-րդ դարում Գրիգոր իշխանի կողմից, Սուրբ Ծիրանավոր և Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցիները, Թուփս մանուկ մատուռը: Ալափարսը դպրոց է ունեցել նաև 200 տարի

առաջ, այդ դպրոցն են հաճախել շրջանի մոտակա գյուղերի դպրոցահասակ երեխաները:

Ալափարսի դպրոցը հիմնադրվել է 1870-ին: Սկզբում ունեցել է 25 աշակերտ, մեկ ուսուցիչ՝ Քերոբ Ավետիսյան: 1890-ական թվականների սկզբին փակվել է ցարական իշխանության կողմից և վերաբացվել 1907-ին՝ 21 աշակերտով: 1913-ին դարձել է եռամյա (102 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ), 1921-ին՝ քառամյա: Ալափարսի դպրոցի և 1929-ին բացված կոլտնտեսական երիտասարդական (կոլերիտ) դպրոցի հիման վրա 1930-ին ստեղծվում է յոթնամյա դպրոց՝ 1935-ից միջնակարգ է: Ալափարսի դպրոցի 1970-1971 ուսումնական տարում ուներ 24 դասարան՝ 658 աշակերտով, 32 ուսուցիչ-ուսուցչուհիներով: 100-ամյակի առթիվ պարգևատրվել է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով:

Չարենցավան համայնքի Արզական գյուղ

Բնակչություն՝ 2872 մարդ:

Արզական գյուղը ունեցել է Արտավազդական, Արտազական, Արտավազդ ապարանք, Արզակյանդ, Արզաքենդ, Արզական անունները: Գյուղի հիմնադրման ակունքները գնում են պատմության խորքերը՝ մինչև մ.թ.ա. 55-34 թթ Արտավազդ 2-րդ արքայի ժամանակաշրջանը, երբ այս տեղանքի բնությամբ հիացած արքան կառուցել է իր ամառանոցը: Այն հետագայում ավերվել է, բայց նրա մերձակայքում կառուցված գյուղը երկար ժամանակ կոչվել է Արտազական, որը տարադարձվելով դարձել է Արզական: Նախկինում եղել է Այրարատ աշխարհի Նիգ գավառում: Արզականի այժմյան բնակիչների նախնիները 1800-ական թվականներին գաղթել են Մակուից, Խոյից, Բայազետից, մասամբ նաև Մուշից:

Արզականը հանդիսացել է առաջին կարգի աստիճանավոր Երևանցի Ղահրաման Մելիք-Աղամալյանի սեփական կալվածքը: 1862 թվականին Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատյանցը եղել է Արզականում, հանդիպում է ունեցել 1-ին կարգի աստիճանավոր կալվածատեր Ղահրաման Մելիք-Աղամալյանի հետ: Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատյանցի վկայությամբ Արզաքանը տեղավորված է եղել երկու փոքրիկ ձորակների միջավայրում, այն ժամանակ ունեցել է 37 տնտեսություն: Մեսրոպ Արքեպիսկոպոս

Սմբատյանցը գրում է. «Արժանի իշխանաց արժանավոր բնակարան և ամրոց է եղած ժամանակին Արզաքանը, նորա շրջավայրերը, որը և արժանի է ներկայի կալվածատեր մեծապատիվ իշխանին՝ Ղահրամանյան աղայի Մելիք-Աղամալյանցին, որի շնորհիվ եկեղեցին և եկեղեցիական դպրոցը բարեկարգ վիճակի մեջ են եղել»:

Գյուղի բնակչությունը գյուղատնտեսական կուլտուրաներից մշակել է ցորեն, գարի, ծխախոտ, կանեփ, վուշ և բոստանային կուլտուրաներ: Գյուղն ունեցել է հետևյալ արտադրական օբյեկտները, որոնք պատկանել են բնիկ տեղացի հայերին 3 դարբնոց, 3 ջուլհականոց, 1 հյուանոց, 1 բրդամշակման արհեստանոց, ունեցել է նաև ձիթահան պատրաստի վիճակում, որի արտադրական կարողությունը տարեկան եղել է 500 բատման կտավատի ձեթի արտադրություն: 1831 թվականին գյուղն ունեցել է 7 ջրաղաց, որից միայն երկուսն է եղել սարքին վիճակում, բոլոր ջրաղացներն ունեցել են մեկ աչք: Գյուղն ունեցել է իր սեփական հիդրոէլեկտրոկայանը, որը հիմնել է Աշոտ Վարդանյանը: Արզականը տեղակայված է Ծաղկունյաց լեռնաշղթայի ստորոտին, Հրազդան գետի աջակողմյան վտակ Դալար գետի ափին, ձորահովտում՝ մրգատու ծառերի մեջ:

Չարենցավան համայնքի Բջնի գյուղ

Մակերես՝ 42.81կմ², Բնակչություն՝ 2902 մարդ:

Համայնքում գործում են՝ 1 դպրոց, 1 մանկապարտեզ, 1 մշակույթի տուն, 1 գրադարան:

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550մ հեռավորությունը մարզկենտրոնից՝ 18.0կմ:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Բջնին Հայաստանի հանագույն բնակավայրերից է: 1-ին անգամ նրա մասին հիշատակում է պատմիչ Ղազար Փարպեցին: Բջնեցի Աթիկ քահանան հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանի հավատարիմ զինակիցներից էր: 11-րդ դարում Բջնին իր շրջակայքով անցնում է Պահլավունիների իշխանական տոհմին: Այդ ժամանակ էլ, Հովհաննես-Սմբատ թագավորի հրամանով դառնում է եպիսկոպոսանիստ ավան: 1066թ. կաթողիկոսական ընտրությունները տեղի են ունեցել Բջնիում: 13-րդ դարի սկզբներին Բջնին անցնում է Զաքարյան հայ իշխանների տնօրինությանը: 1387-

88 թթ. գյուղը ենթարկվում է Լենկթեմուրի ավերածություններին: 1673 թ. այստեղ իջևանել է Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը: 1770թ. Բջնի է այցելել նաև ճանապարհորդ Տուրնեֆորը: Միջին դարերում Բջնին հայ գրչության կարևորագույն կենտրոններից էր: Մեզ են հասել 12-17 դդ. այնտեղ ընդօրինականացված հայերեն մի քանի ձեռագրեր: Ըստ տեղեկությունների Բջնիի բերդը կառուցել են Պահլավունիները՝ 11-րդ դարում: Բջնիի միջնադարյան ճարտարապետության զարդը գյուղի կենտրոնում գտնվող սբ. Աստվածածին եկեղեցին է, որը կառուցվել է Գրիգոր Մագիստրոսի պատվերով՝ 1031թ.: Եկեղեցու պատերին կան վիմափոր արձանագրություններ: Վերանորոգվել է 1947 թ.:

Չարենցավան համայնքի Կարենիս գյուղ

Բնակչություն՝ 839 մարդ, գյուղի մակերեսը – 892.0հա, հիմնադրման ժամանակաշրջանը - 20-րդ դար, սահմանակից է Չարենցավան, Ալափարս, Ֆանտան, Նուռնուս, Արզական համայնքին, գյուղի պատմական անվանումներն են Կարենավանք, Կարենիստ, Կարենիս: Բնակչության հիմնական զբաղմունքը - անասնապահություն և գյուղատնտեսություն: Հոգևոր կառույցներ - <<Սուրբ Մաթևոս և Անդրեաս Առաքյալների վանական համալիր>> (5-րդ դար) և <<Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի>> (5-րդ դար):

Պատմամշակութային հուշարձաններ՝ Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հուշարձան:

Պատմական ակնարկ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս (նախկինում՝ Գյումուշ) գյուղն, ըստ հնուց եկած ժողովրդական՝ բերնե-բերան փոխանցված պատմության, հիմնել է Կարեն անունով իշխանը, որը մի բարձրավանդակի վրա կառուցել է իր կացարանը՝ <<Կարենի բերդը>>, և որի շուրջը հետագայում տարածվել է գյուղը: Մինչև հիմա ժողովրդի մեջ տարածված է այդ տեղամասը՝ <<Բերդի գլուխ>> անունով: Գյուղի հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ, սակայն Կարենիսի դարերի խորքից գալը վկայում է V դարին պատկանող <<Սուրբ Մարիամ Աստվածածին>> միանավ բազիլիկ եկեղեցին, որը գտնվում է գյուղի մեջ՝ ձորի բերանին: Երկրաշարժերի

հետևանքով ծածկը քանդվել է, բայց պատերը կանգուն են, իսկ պոկված քարերն ու խաչքարերը գտնվում են եկեղեցու տարածքում: Գյուղն իր ամբողջ պատմության ընթացքում ժամանակ առ ժամանակ բնակեցվել է քրիստոնյաներով և մուսուլմաններով: Այդ են վկայում եկեղեցու շուրջը հայտնաբերված գերեզմանները և անվանումները (օրինակ Գյումուշ, որը թուրքերենից թարգմանաբար նշանակում է արծաթ): Գյուղը վերջնականապես բնակեցվել է 1917-1920թթ.-ին: Համայնքի բնակչության հիմնական մասը գաղթականներ են՝ արմատներով մշեցիներ: Գյուղի տարածքում է գտնվում նաև V դարին պատկանող <<Սուրբ Մաթևոս և Անդրեաս Առաքյալների>> վանական համալիրը: Ամբողջ համալիրը փողկապվածության մեջ է գտնվում միմյանց և բնության հետ: Վանքի մեջ, խորանի տակ, կա մի խոռոչ, ուր ժամանակին պահվել են սուրբ մասունքներ՝ Մաթևոս առաքյալի աջը և Անդրիաս Առաքյալի գլուխը: Պահարանը, որտեղ պահվել են մասունքները, կամարած է, արծաթապատ, մի երեսը ոսկեզօծ՝ Անդրեաս և Մաթևոս Առաքյալների պատկերներով, եզերքը մանր թանկարժեք քարերով պատած, այժմ պահվում է Սուրբ Էջմիածնի թանգարանում N 33 ցուցանակի տակ: Համալիրը ուսումնասիրվել է 1975 թվականին և դրվել է ցուցանակ՝ /Պաշտպանվում է պետության կողմից/ և մոռացության մատնվել: Իր ճարտարապետական եզակիությամբ և պատմական մեծ արժեք ունեցող այս կառույցը ավիրվում է: Համայնքը իր ուժերով կատարել է որոշակի աշխատանք, սակայն վերականգնման և ամրացնելու համար կառույցը պետական աջակցության և մասնագիտական մոտեցման կարիք ունի: 2001թ.-ից ամեն տարվա սեպտեմբերի վերջին կիրակի օրը Կարենիս համայնքը նշում է Առաքյալների ուխտը <<Մաթևոս և Անդրեաս Առաքյալների>> եկեղեցու բակում: Ամբողջ գյուղը մասնակցում է մատաղի արարողությանը, դիոլ-գուռնան, երգն ու պարը թնդացնում են ամբողջ ձորը: Գյուղում առկա եկեղեցիների, բազմաթիվ խաչքարերի, հեթանոսական ժամանակաշրջանների արձանների և սառնորակ և քաղցրահամ աղբյուրների շնորհիվ կարելի է համայնքում զարգացնել զբոսաշրջությունը: Գյուղը ունի միջնակարգ դպրոց, որի ուսուցչական կազմը հիմնականում տեղացիներ են:

Կարենիս գյուղը գտնվում է Հրազդան գետի ձախ ափին՝ ձորի եզրին, ծովի մակերևույթից 1350-1400մ բարձրության վրա և այդ բարձրունքից կարծես հսկում է

գետի անխռով և միալար հոսքին: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային, երաշտի և ցրտահարության տարիներն, որից շատ է տուժվում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին: Գյուղի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է $15-17^{\circ}\text{C}$, ամենաբարձրը՝ $31-33^{\circ}\text{C}$, ամենացածրը՝ $20-25^{\circ}\text{C}$: Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 25.0կմ հեռավորության վրա:

Չարենցավան համայնքի Ֆանտան գյուղ

Բնակչություն՝ 1071մարդ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Որպես բնակավայր հիմնադրվել է 1828-30թթ.: Բնակչության հիմնական մասը լքված Թեգխարաբ գյուղի բնակիչներն են, մի մասն էլ Արևելյան Հայաստանից գաղթածներ: Գյուղն սահմանակից է Ալափարս, Բջնի, Կապուտան, Կարենիս, Ջրաբեր, Հատիս գյուղերին: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 42.0հա: Ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ:

9. Բնական պայմաններ

Կլիմայական բնութագիր

Կլիման բարեխառն չափավոր ցամաքային է: Ձմեռը ցուրտ է, համեմատաբար խոնավ, հաստատուն ձնածածկույթով: Հունվար ամսվա օդի միջին ջերմաստիճանը տատանվում է $-6,2^{\circ}\text{C}$ սահմաններում: Գարունը համեմատաբար տևական է, մեղմ բարեխառն: Ամառը տաք է, չափավոր խոնավ, պարզ եղանակների գերակշռությամբ: Հուլիս-օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը $17,7^{\circ}\text{C}$ -ից $18,1^{\circ}\text{C}$, առավելագույնը 35°C : Աշնանը տաք է՝ անհողմ եղանակների գերակշռությամբ: Անսառնամանիք ժամանակամիջոցի տևողությունը շուրջ 200 օր է: Տարեկան տեղումները 64-666 մմ: Օդի բազմամյա միջին ջերմաստիճանը կազմում է $6,4^{\circ}\text{C}$: Ջերմաստիճանների անցումը 0°C -ից տեղի է ունենում նոյեմբերին և ապրիլին: Նոյեմբեր և ապրիլ ամիսներին ջերմաստիճանը կարող է իջնել 0°C -ց ցածր:

Տարածքում գերակայում են հարավային, հարավ-արևմտյան և հարավ-արևելյան քամիներ՝ միջին ամսեկան 2,1–4,3մ/վրկ արագությամբ: Տարածքի կլիմայական հարաչափերը մանրամասն ներկայացված է ՀՀ Քաղաքաշինության Նախարարի ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական Կլիմայաբանություն» շինարարական նորմերի, Ֆանտան բնակավայրի օդերևույթաբանական կայանի տվյալների հիման վրա: Տարածքում մշակում են հացահատիկային կուլտուրաներ, շաքարի ճակնդեղ, պալարային կուլտուրաներ, նաև պտուղներ: Այս կլիման նպաստավոր է լեռնային հանգստավայրերի և առողջարանների համար:

Համաձայն ՀՀ Քաղաքաշինության Նախարարի ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական Կլիմայաբանություն» շինարարական նորմերի

Աղյուսակ 1.1. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի . օդերևութա- բանական կա յանի անվանո ւմը	Բարձ- րություն ծովի մ ակարդակից. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °C												Միջին տարե կան. °C	Բացար- ձակ նվազա- գույն. °C	Բացար ձակ ա ռավե- լագույն . °C
		Հուն- վար	Փետր- վար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոս- տոս	Սեպ- տեմբեր	Հոկ- տեմբեր	Նոյեմ- բեր	Դեկտե մ- բեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ֆանտան	1800	-6,2	-4,9	-0,9	5,7	10,7	14,4	17,7	18,1	14,6	8,8	2,4	-3,6	6,4	-23	35

Աղյուսակ 1.2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան,%	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Ֆանտան	80	77	73	69	69	68	67	64	62	68	76	80	71	77	45

Աղյուսակ 1.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական, օրական առավելագույն մմ												Ձնածածկույթ			
Գեղամա լեռնաշղթայի ստորերկրյա ջրերը հիմնականում բեռնաթափվում են Հրազդան գետի կիրճում՝ 0.2-2.5մ³/վ ծավալով աղբյուրների տեսքով:

Հրազդան գետի բնական ջրային ռեժիմը բնութագրվում է գարնանային-ամառային ջրառատությամբ, սակավաջրության տևական ժամանակահատվածով, ձմեռային մինիմումով: Հրազդան գետի ռեժիմը լիովին կարգավորված է հիդրոտեխնիկական կառույցների համակարգով:

Շերտագրություն

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են Պլիոցենի հրաբխային գոյացումները, Վերին չորրորդականի մոխրային և լավային գոյացումները, ծածկված ժամանակակից դելյուվիալ-էյուվիալ նստվածքներով: Նրանք ներկայացված են (ներքևից վերև) հետևյալ ապարներով:

Գեոմորֆոլոգիա

Շրջանի մորֆոլոգիայում զուգակցվում են ռելիեֆի հրաբխային, էրոզիոն և գենետիկ տիպերը: Առաջինը հանդիսանում է հիմնական նախաստեղծված, իսկ երկրորդը՝ վերադիր տիպ:

Ռելիեֆի հրաբխային տիպը, որը բնութագրական է Հրազդան գետի միջին հոսանքի ավազանի մև մասին, ուսումնասիրվող շրջանում ներկայացված է Գեղամա լեռնաշղթայից դեպի Հրազդան գետի կիրճը թեքված հյուսիս-արևմտյան լեռնաճյուղի հրաբխային լանջերով:

Այդ լեռնաճյուղերի ծայրամասային՝ արևմտյան մասում գտնվող, ուսումնասիրվող տարածքը բնութագրվում է աստիճանաձև, ուժեղ դենուդացված, պլիոցենային լավաների վաղ հոսքերի փափուկ ձևերով:

Լավային ռելիեֆի սանդղավորությունն առավել վառ արտահայտված է լայնական ուղղությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի նախալեռներից մինչև Հրազդան գետի կիրճը:

Հաստաշերտի հզորությունն այստեղ տատանվում է 100-120 մինչև 500-600մ սահմաններում: Այս հաստաշերտի կազմի մեջ մտնում են նաև Գեղամա լեռնաշղթայի չորրորդականի անդեզիտային և անդեզիտա-բազալտային հոսքերը:

Ռելիեֆի էրոզիոն տիպին է պատկանում Հրազդան գետի կիրճը, որն ունի ընդհանուր միջօրեական ուղղվածություն և մխրճված է միոցեն-չորրորդականի լավաների, իսկ տեղ-տեղ նրանց տակ փռված միոցենի ավազաքարա-կավային նստվածքների մեջ:

Կիրճի հունի և հատակի փոքր ոլորաններ նկատվում են առանձին տեղամասերում և պայմանավորված են հիմնականում կիրճի հատակին և լանջերին ապարների ձևափոխումների հետ:

Հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսանկյունից շրջանը համեմատաբար հարուստ է գրունտային ջրերով, որոնք պատկանում են ճեղքային տիպերին: Այս տիպի ջրերի մեջ բացառապես մեծ նշանակություն ունեն ներլավային և անդրլավային ջրերը, որոնք այստեղ զուգակցված են չորրորդականի և վերին պլիոցենի լավային հոսքերին և կենտրոնացած են, հիմնականում լավաների տակ թաղված հնավուն գետահովիտների ակունքում: Բոլոր այս ջրերը առաձնանում են խմելու համար պիտանիության բարձր որակով, թույլ հանքայնությամբ և 6-8°C կարգի ջերմաստիճանով: Նրանք հզոր աղբյուրների տեսքով մակերևույթ են դուրս գալիս այնտեղ, որտեղ լավային հոսքերի ստորոտը հատվում է ռելիեֆի ժամանակակից ձևերի մակերեսի դեպրեսիաների հետ:

Ստորերկրյա ջրահոսքերի սնուցումը տեղի է ունենում բազալտային ծածկերում քառսային դասավորված ճաքերի միջոցով:

Ալափարս գյուղից հյուսիս-արևմուտք աղբյուրների խմբերը՝ մինչև 40լ/վ դեբիտով, ծառայում են, որպես ջրամատակարարման աղբյուր Չարենցավանի համար:

Շրջանում նկատվում են նաև կոնտակտային ջրեր դեյուվիալ նստվածքներում՝ նրանց համադրված անդեզիտա-բազալտային լավաներով:

Ֆիզիկա-երկրաբանական պրոցեսներ

Տարածաշրջանում ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները տակավին թույլ են զարգացած՝ դիտվում են միայն լոկալ ձորակների ռաջացումներ և մակերևույթային էրոզիա:

Ձորակների առաջացումները նակտելի են Չարենցավան-Ալափարս ավտոճանապարհի երկայնքով՝ Ալափարս գյուղի հյուսիս-արևելքում: Որպես կանոն, ձորակների երկարությունը չի գերազանցում 0.3-1.0կմ, խորությունը՝ 1.0-2.5մ, լայնությունը, ըստ վերին մասի՝ 5-8մ:

Վերը նշված տեղերում, հաստատուն հոսքի բացակայության հետևանքով, ձորակների առաջացման պրոցեսները դանդաղ են զարգանում: Ձորակները լցված են պրոլյուվիալով՝ ներկայացված փոքր գլաքարերով, մև աբեկորներով, կոպիճով, մանրավազով, վատ հղկված խճով, կավավազա-ավազակավային լցանյութով, բազալտով: Զարգացող ձորակների կողերը հարթ են:

Մակերեսային էրոզիան դիտվում է կիրճերի լանջերին և թմբերին, ունի աննշան տարածում և ներկայացված է շիթային էրոզիայի միջոցով՝ մակերևույթային ողողմամբ:

12.Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների բնութագիրը

Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության՝ տեխնոլոգիական վերազինում պողպատե և թուջե ծովածքների ստացման՝ արտադրության հզորացման, ինչպես նաև ենթակառուցվածքների նախատեսման և իրականացման համար լրացուցիչ տարածքների օգտագործում կամ նոր հողային ռեսուրսների ներառում չի նախատեսվում: Գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող և արդեն կառուցապատված,

Չարենցավանի արտադրական գոտում՝ ընկերության սեփականություն հանդիսացող տարածքում:

Գործունեության տարածքում հողային ռեսուրսերի պահպանման հիմնական միջոցառում են հանդիսանում հումքի և արտադրական մնացորդների տեղակայման և պահեստավորման խնդիրները:

Բոլոր հումքատեսակները և արտադրական մնացորդները ընդունվում և պահեստավորվում են փակ շինության մեջ՝ դրանց համար նախատեսված համապատասխան բետոնապատ տեղամասերում, բացառելով հողածածկ տարածքները հնարավոր աղտոտումից:

Գործունեության արդյունքում առաջացած թափոնները՝ ըստ իրենց վտանգավորության դասի, ընկերությունում հավաքվում և պահեստավորվում են դրանց համար նախատեսված ժամանակավոր կուտակման վայրերում: Այդ տարածքները կահավորված են աշխատանքի անվտանգության պահանջներից ելնելով, ինչպես նաև բնապահպանական նորմերի և պահանջների համաձայն:

Տարածքից հեռացվում կամ տրվում են վնասագերծման /ոչնչացման/ համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպություններին, իսկ այն թափոնները որոնք հնարավոր է օգտագործել որպես երկրորդային հումք պահվում են ընկերությունում դրանց համար նախատեսված հատուկ տարածքներում՝ բացառելով հողային և ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և այն փաստն, որ նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ նոր տարածքներ չեն օտարվելու, արտադրական տարածքը մնում է անփոփոխ, ուստի հողային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցության մեղմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների ներգրավում չի նախատեսվում:

Կենսաբազմազանություն

Ինչպես արդեն նշվել է նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Չարենցավանի արտադրական գոտում՝ Ընկերության սեփականություն հանդիսացող տարածքում և նոր տարածքների ներգրավում չի նախատեսվում, ուստի անմիջական ազդեցություն տարածքի կենդանական ու բուսական աշխարհի վրա չի նախատեսվում:

Հիմք ընդունելով վերոգրյալը նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ կենսաբազմազանության վրա հնարավոր բացասական ազդեցության մեղմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների ներգրավում չի նախատեսվում:

Զգայուն կլանիչներ

Զգայուն կլանիչների՝ մասնավորապես բնակավայրերի, վրա նախատեսվող գործունեությունը հնարավոր ազդեցություն չունի, քանի որ մոտակա Չարենցավան քաղաքը բնակելի տարածքները սկսվում են մոտ 500մ-ից 1,0կմ հեռավորության վրա:

Ջրօգտագործում

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ում կիրառվում է ջրամատակարարման խառը համակարգ (ՋԽՀ): Ջուրն օգտագործվում է հիմնական տեխնոլոգիական պրոցեսների, օժանդակ ստորաբաժանումների և տնտեսակենցաղային կարիքների համար, ընդհանուր թարմ ջրի տարեկան ծախսը կազմում է 97.0հազ.մ³: Գործարանում տեխնոլոգիական նպատակների համար գործում է շրջադարձ ջրի համակարգ:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ի թարմ խմելու ջրի մատակարարումը իրականացվում է պայմանագրային հիմունքներով, Չարենցավան քաղաքի ջրամատակարարման ցանցից:

Ոռոգման ջրատարից, ջրօգտագործման ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն վերցրված ջուրն օգտագործվում է կանաչ տարածքների ոռոգման նպատակներով: Ոռոգմա ջուր մատակարարվել է Կոտայք ՋՕԸ համաձայն 22 մայիսի 2018թ կքված թիվ 32688 պայմանագրի: 2019թ-ից Կոտայք ՋՕԸ դժվարանում է մատակարարել ոռոգման ջուր, ուստի ընկերությունը փնտրում է այլ աղբյուրներ ոռոգման համար:

Ընկերությունը պլանավորվում է նաև սեփական տեխնիկական ջրի աղբյուր ունենալ մոտակա տարիներին:

"Ձուլակենտրոն" ԲԲԸ ջրօգտագործման հաշվեկշիռ

Ջրի հիմնական սպառողներն	Ջրի տարեկան սպառում, միավորը մ ³ /տարի				Անվերադարձ կորուստներ		
	Ընդամենը	Թարմ ջուր			Հաջորդաբա օգտագործու		
		Խմելու	Ոռոգման	Ընդամենը		Խմելու	Ոռոգման
1	2	3	4	5	9		10
Հիմնական արտադրական սպորաբաժանումներ	164393.2	23230.3	-	23230.3	-	23230.3	
Հաստոցների հովացման	1539.2	92.4	-	92.4	-	92.4	-
ձուլարանների հովացման	44928	8985.6	-	8985.6	-	8985.6	-
դետալների կոփման	117926	14152.3	-	14152.3	-	14152.3	-
Օժանդակ սպորաբաժանումներ	78451.2	3922.6	-	3922.6	-	3922.6	-
կոմպրեսորներ	78451.2	3922.6	-	3922.6	-	3922.6	-
տրանսպորտի տեղամաս	-	-	-	-	-	-	-
Տնտեսա-կենցաղային	71905.7	5665.7	66240	71905.7	-	5665.7	66240
սանիտարահիգիենիկ	5087.7	5087.7	-	5087.7	-	5087.7	-
հատակի լվացմա	578	578	-	578		578	-
կանաչ գոտիների ջրում	66240	-	66240	66240		-	66240
Ընդամենը	314750.1	32818.6	66240	99058.6		32818.6	66240

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ում դեպի կոյուղու ցանց արտահոսքի ջրերը գոյանում են տնտեսակենցաղային գործունեության արդյունքում: Արտադրական ջրերը, որոնք հիմնականում գոյանում են սարքավորումների հովացման արդյունքում, շրջանառու են: Համակարգը փակ է և արտահոսքեր դեպի կոյուղի կամ շրջակա միջավայր բացակայում են: Ընկերությունում հիդրոմետալուրգիական պրոցեսներ չկան:

ԿԵՂՏԱՋՐԵՐՈՎ ԿՈՅՈՒՂՈՒ ԿՈՆԵԿՏՈՐ ԹԱՓՎՈՂ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՐՏԱՀՈՍՔԻ /ԹՍԱ/ ՆՈՐՄԱՆՆԵՐ

1. ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂ

«ՁՈՒԼԱԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ

2. ԱՐՏԱՀՈՍՔ

ԹԱՓՄԱՆ 1 /ՄԵԿ/ ԿԵՏ

3. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ԿԱՐԳԸ

ԿՈՄՈՒՆԱԼ - ԿԵՆՑԱՂԱՅԻՆ

4. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ԹԱՓՄԱՆ ՎԱՅՐԸ

ԿՈՅՈՒՂՈՒ ԿՈԼԵԿՏՈՐ

5. ԹՍԱ-ՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ $7219 \text{ m}^3/\text{ՏԱՐԻ 1.16 m}^3/\text{ԺԱՄ}$

6. ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ԿԱԶՄԸ և ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹՍԱ-Ն, ԸՍՏ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ /ՉՆՇՎԱԾ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԸ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է/:

Հ/Հ	ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ԿԱԶՄԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ Գ/Մ ³	ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՀՈՍՔ Գ/ԺԱՄ	ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ Գ/Մ ³	ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹՍԱ Գ/ԺԱՄ
1	ԹԿՊԼՐԻՎ	200.00	232.00	200.00	232.00
2	ԹՔՊ	350.00	406.00	350.00	406.00
3	ԿԱԽ. ՄԱՍՆԻԿՆԵՐ	170.00	197.20	170.00	197.20
4	ՍՈՒԼՖԱՏՆԵՐ	150.00	174.00	150.00	174.00
5	ՔԼՈՐԻԴՆԵՐ	100.00	116.00	100.00	116.00
6	ՆԱՎԹԱՄԹԵՐՔՆԵՐ	20.00	23.20	20.00	23.20

ԿԵՂՏԱՋՐԻ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ՄԱԿԵՐԱՌՈՒՅԹԻՆ ՉԱԵՏՔ Է ԼԻՆԵՆ ՆԱՎԹԱՄԹԵՐՔՆԵՐԻ, ԲՈԼՈՐ ՏԵՍԱԿԻ ՑՈՒՂԵՐԻ ԹԱՂԱՆԹՆԵՐ և ԼՈՂԱՑՈՂ ՆՅՈՒԹԵՐ:

ԳՈՒՆԱՅԻՆ ԵՐԱՆԳ
ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ CO
ԿՈԼԻ-ԻՆԴԵՔՍ
ՋՐԻ ՌԵԱԿՑԻԱ PH

ՊԵՏՔ Է ԲԱՅԱԿԱՅԻ
ՈՉ ԱՎԵԼ ՔԱՆ 20
ՈՉ ԱՎԵԼ ՔԱՆ 1000/Լ
6.5-8.5

Պետք է փաստել այն հանգամանքը, որ հեռանկարում ընկերության կողմից արտադրական ծավալների մեծացման դեպքում ջրօգտագործման քանակների մեջ կավելանա սարքավորումների հովացման ընթացքում ջրի տարեկան սպառման ծավալներից՝ անվերադարձ կորուստները մոտ 20%-ով: Այսինքն կավելանա լրասնուցման ծավալները՝ 20%-ով:

"Ձուլակենտրոն" ԲԲԸ ջրօգտագործման հաշվեկշիռը հեռանկարում /50000տ/տարի արտադրության դեպքում/

Ջրի հիմնական սպառողներն	Ջրի տարեկան սպառում, միավորը մ ³ /տարի					Անվերադարձ կորուստներ	
	Ընդամենը	Թարմ ջուր			Հաջորդաբա օգտագործու		
		Խմելու	Ոռոգման	Ընդամենը			
1	2	3	4	5	9	Խմելու	Ոռոգման
Հիմնական արտադրական սպորաբաժանումներ	164393.2	23230.3	-	23230.3	-	23230.3	
Հաստոցների հովացման	1539.2	308	-	92.4 308	-	308	-
ձուլարանների հովացման	44928	25952	-	8985.6 25952	-	25952	-
դետալների կոփման	117926	14152.3	-	14152.3	-	141152.3	-
Օժանդակ սպորաբաժանումներ	78451.2	3922.6	-	3922.6	-	3922.6	-
կոմպրեսորներ	78451.2	3922.6	-	3922.6	-	3922.6	-
տրանսպորտի տեղամաս	-	-	-	-	-	-	-
Տնտեսա-կենցաղային	71905.7	5665.7	66240	71905.7	-	5665.7	66240
սանիտարահիգիենիկ	5087.7	5087.7	-	5087.7	-	5087.7	-
հատակի լվացմա	578	578	-	578		578	-
կանաչ գոտիների ջրում	66240	-	66240	66240		-	66240
Ընդամենը	314750.1	50000.6	66240	116240.6		50000.6	66240

Առողջապահական գործոններ

Ընկերության գործունեության արդյունքում առողջապահական ազդեցության գնահատման համար հիմք է հանդիսանում հի-ում գործող օրենսդրական կարգավորումները: արտադրական ռիսկերի հիման վրա աշխատակիցների առողջության վրա ազդեցության գնահատումը իրականացվում է համաձայն <<Արտադրական միջավայրում և աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող բնակչության առանձին խմբերի առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության անցկացման կարգը, գործոնների, կատարվող աշխատանքների բնույթի, զննության ծավալի, բժշկական հակացուցումների ցանկերը և աշխատանքի պայմանների հիգիենիկ բնութագրման>> կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության Որոշումը:

Ընկերությունը ապահովում է աշխատակիցների տարեկան բուժզննման պայմաններ, ինչպես նաև նոր ընդունվող աշխատակիցների նախնական բժշկական զննման պայմանը:

Լիազոր մարմնի կողմից ընկերությանը որևէ այլ պահանջներ կամ առաջարկներ ներկայացնելու մասին տվյալներ չկան:

Ընկերությունը ապահովված է աշխատակիցների հիգենիկ պահանջների ապահովման համար անհրաժեշտ հանդերձարաններով մինչև 700 աշխատակցի համար, ցնցուղարաններով, սննդի ընդունման ճաշարանով և անձնական հիգենայի ապահովման համար անհրաժեշտ այլ պայմաններով:

Նախատեսվող վերազինման արդյունքում վերանորոգման մեջ են ներառված տեղամասի առանձնացված հանդերձարանային և աշխատակիցների հանգստի սենյակները:

Մակերևութային և ստորերկրա ջրեր

Հրազդանի ԶԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:

2022 թվականին Հրազդանի ԶԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 5%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 35%-ում՝ 3-րդ դաս, 5%-ում՝ 4-րդ դաս և 55%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2022 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Քասախ գետի գետաբերանի դիտակետի, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրազդանը, Գետառը և Ծաղկաձորը: Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որից 13-ում՝ նաև որակի մոնիթորինգ:

2021 թվականին այս ԶԿՏ-ից ջրօգտագործումը կազմել է 1183.3 մլն մ³, որից 38%-ը բաժին է ընկնում մակերևութային, 62%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ձկնաբուծության (47%), ոռոգման (39%), արտադրական (9%) և խմելու (5%) նպատակներով:

Մակերևութային ջրերի Հիդրոլոգիական դիտարկումներ

Հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: Յոթ հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան ելքերի վերաբերյալ տվյալները և նորմերի նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 21 Հրազդանի ԶՏԿ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը

Գետ	Դիտակետ	Միջին տարեկան ելքը, մ3/վ		
		փաստացի	նորմ	%
Հրազդան	Հրազդան	6.30	7.77	81.1
Հրազդան	Արգել	2.86	4.21	67.9
Հրազդան	Երևան	5.96	6.81	87.5
Մարմարիկ	Հանքավան	1.47	1.68	87.5
Մարմարիկ	Աղավնաձոր	4.85	4.79	101
Քասախ	Վարդենիս	0.58	1.21	47.9
Քասախ	Աշտարակ	3.67	3.43	107


Մակերևութային ջրերի որակ




Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով: Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից վերև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Գեղանիստ գյուղի մոտ, և գետաբերանի հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Քաղսի գյուղից ներքև և գետաբերանում՝ պայմանավորված ամոնիում իոնով և վանադիումով, Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև հատվածներում՝ վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ թթվածնի 5-օրյա կենսաբանական պահանջարկով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, նիտրիտ և ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով: Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով:

Գծապատկեր. Հրազդան գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022թթ.





Ստորերկրյա քաղցրահամ ջրեր


Հրազդանի ԶԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մոնիթորինգ իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը, որոնցից 13 դիտակետում իրականացվել է նաև ջրի որակի մոնիթորինգ:

Գյ. Սուլակի N1297, N1832 և գյ. Բջնիի N246 դիտակետերում 2022թ. ծախսի բարձր արժեքները նկատվել են մայիս-հունիս, իսկ ցածրը՝ հունվար, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին և տատանվում են 1.75-7.65 լ/վ սահմաններում:


Ապարան քաղաքի N2051 բնաղբյուրում ծախսերը 2022 թ. տատանվել են 4.23-6.77 լ/վ սահմաններում:

Ջրերի ծախսի և մակարդակի փոփոխությունները զգալի են Հրազդանի ԶԿՏ-ի Արարատյան գոգավորության տարածքում գտնվող N78, N1523, N1519, N1526 դիտակետերում:

Հրազդանի ԶԿՏ-ի 13 դիտակետում 2022 թվականի մայիս և նոյեմբեր ամիսներին իրականացվել է ջրի որակի մոնիթորինգ: Այս ԶԿՏ-ի դիտակետերում հանքայնացման տատանումները կազմել են 0.1-1.3 գ/լ, սուլֆատ իոնի կոնցենտրացիաների տատանումները՝ 5.8-517.2 մգ/լ: Հանքայնացման գերազանցումներ դիտվել են ք. Մասիսի N1519, գյ. Ջրահովիտի N2007 և գյ. Հովտաշենի N2053 հորատանցքերում, սուլֆատ իոնի կոնցենտրացիաները գերազանցումներ դիտվել են գյ. Ջրահովիտի N2007 հորատանցքում: Քլորիդ իոնի կոնցենտրացիաների տատանումները կազմել են 2.4-196.4 մգ/լ, նիտրատ իոնի տատանումները՝ 2.7-44.1 մգ/լ, պղնձի, կապարի և արսենի կոնցենտրացիաների տատանումները համապատասխանաբար՝ 0.0005-0.005 մգ/լ, 0.0001-0.009 մգ/լ և 0.0003-0.046մգ/լ և չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




Գծապատկեր. Հրազդանի ԶԿՏ-ի բնադրյուրների ջրի ծախսը 2021-2022թթ.



Գծապատկեր. Հրազդանի ԶԿՏ-ի չշատրվանող հորատանցքերի ջրի մակարդակը 2021-2022թթ.

Հատվածում հորատանցքեր
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ




Գծապատկեր. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ջրի մակարդակը 2021-2022թթ.


Հատվածում հորատանցքեր

Հրազդանի ՋԿՏ


Ծախս, լ/վ




Գծապատկեր. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ջրի ծախսը 2021-2022թթ.




Գծապատկեր. Հրազդանի ԶԿՏ-ի գրունտային ջրիորների ջրի մակարդակը 2021-2022թթ.



Գծապատկեր. Հրազդանի ԶԿՏ-ի բնադրյուններում հանքայնացման փոփոխությունը 2022թ.




Գծապատկեր. Հրազդանի ԶԿՏ-ի բնադրյուններում նիտրատ իոնի կոնցենտրացիան 2022թ.




Գծապատկեր. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրություններում սուլֆատ իոնի կոնցենտրացիան 2022թ.

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի
մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի արդյունքները / 2022 թվական




Մթնոլորտային օդ Զարենցավան


Զարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 դիտակետ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹ-ները: Իրականացված դիտարկումների 6%-ում դիտվել է ազոտի երկօքսիդի գերազանցումներ համապատասխան ՍԹ-ից:

Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուր է հանդիսանում արդյունաբերությունը:

Նախորդ տարվա համեմատությամբ 36%-ով աճել է ազոտի երկօքսիդի, 9%-ով՝ ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաները:





Գծապատկեր. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ձմռան երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.



Գծապատկեր. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը 2021-2022 թթ.

Գծապատկեր 55. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները





Հողի որակի նորմեր

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից իրականացվող գործունեությունը նախատեսվում է արդեն իսկ գոյություն ունեցող և կառուցապատված տարածքում, իսկ նախատեսվող վերազինման արդյունքում նոր տարածքների օտարում կամ խախտում չի նախատեսվում, ուստի տարածաշրջանի հողային ռեսուրսներին հասցվող հնարավոր ազդեցությունը բացակայում է:

Ստորև ներկայացվում է տարածաշրջանում իրականացված հողային ծածկույթի աղտոտվածության ուսումնասիրության արդյունքները ըստ «Հիդրո օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի:

Հողերի որակի գիտահատումն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («ՀՄԿ» ՊՈԱԿ) կողմից, որն ամփոփված է Կազմակերպության 2022 թվականի շրջակա միջավայրի մասին տարեկան տեղեկագրում:

Տվյալների ամփոփում - 2022 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռի, Վայոց ձոր, Սյունիք, Շիրակ և Արմավիր մարզերում, ինչպես նաև՝ Երևան քաղաքում: Համաձայն վերը նշված տվյալների ՀՀ Կոտայքի մարզում հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրություն չի իրականացվել:

Թափոնների կառավարում

Ընկերությունը ունի առաջացող Թափոնների գոյացման նորմատիվներ և դրանց տեղադրման սահմանաքանակների թույլտվություն՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

<<Ձուլակենտրոն>> ԲԲԸ-ում անձնագրավորված թափոնների գործածության ոլորտում նախատեսվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակում.

թափոնի անվանումը և ծածկագիրը	վտանգավորության դասը	թափոն գոյացնող պրոցեսի անվանումը	Թափոնի հետ նախատեսվող միջոցառումներ
Էլեկտրավառարանային ֆերոսիլիցիումի խարամ 31201810 01 004	4	Սև մետաղի հալում և ձուլում	Համատեղ տեղադրում աղբավայրում
Կաղապարային խառնուրդի թափոններ 31402500 01 99 4	4	Մետաղի ձուլման կաղապարների պատրաստում	Համատեղ տեղադրում աղբավայրում
Բանեցված օդանշիչ դողեր 57500200 13 00 4	4	Ավտոմեքենաների շահագործում	Թողնվում են բանեցված դողերը նորով փոխարինման սպասարկման կետերում
Եռակցման խարամ 31404800 01 99 4	4	Մետաղների զրոյում	Որպես մետաղի ջարդոն օգտագործվում է ընկերության մետաղի ձուլման վառարանում
տարատեսակ փայտի մշակումից առաջացած եզրակտրտվածք (օրինակ՝ եզրակտրտվածք պարունակող փայտե-տա S շեղային և/կամ փայտե-թելքավոր սալիկների) 17190106 01 00 4	4	Փայտե տարաների պատրաստում, փայտե իրերի վերանորոգում	Տրվում է աշխատակիցներին որպես վառելանյութ
Իրենց սպառողական հատկությունները կորցրած շարժիչային յուղերի մնացորդներ 54100301 02 03 3	3	Ավտոմեքենաների շահագործում	Օգտագործվում է հիդրավլիկ համակարգերի յուղի լրացման համար
Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան 92110100 13 01 2	2	Ավտոմեքենաների շահագործում	Ժամանակավոր պահում
Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան 35330100 13 01 1	1	Արտադրական տարածքների լուսավորություն	Ժամանակավոր պահում

<<Ձուլակենտրոն>> ԲԲԸ-ում թափոնների ժամանակավոր կուտակման բաց տիպի հրապարակը մեկն է, մոտ 1000մ² օգտագործվող մակերեսով: Ժամանակավոր տեղադրման տարածքը առանձնացված է և համապատասխանում է բնապահպանական հետևյալ նորմերին.

- a. Այստեղ կուտակվող թափոնը Էլեկտրավառարանային ֆերոսիլիցիումի խարամն է, որը պարբերաբար տեղափոխվում է տեղադրման վայր:

- b. Կադապարային խառնուրդի թափոնները ժամանակավոր պահվում են արտադրամասում առանձնացված տարածքում և պարբերաբար տեղափոխվում են տեղադրման վայր:
- c. Բանեցված օդաճնշիչ դողերը փոխարինվում են նորերով համապատասխան սպասարկման կետերում, իսկ բանեցվածները թողնվում են այդ կետերում:
- d. Եռակցման խարամը հավաքվում է մեխանիկական արտադրամասում մետաղական տարաների մեջ և պարբերաբար որպես մետաղի ջարդոն օգտագործվում ճուլման պրոցեսում:
- e. Տարատեսակ փայտի մշակումից առաջացած թափոնները հավաքվում են մետաղական կոնտեյնների մեջ և պահպանվում փայտամշակման արհեստանոցում ու բաժանվում ընկերության աշխատակիցներին որպես վառելիք:
- f. Սպառողական հատկությունները կորցրած շարժիչային յուղերը հավաքվում են յուղերի համար նախատեսված մետաղական տակառներում որոնք պահվում են քսայուղերի համար նախատեսված փակ պահեստում՝ տրանսպորտային տեղամասում և օգտագործվում հիդրավլիկ սիստեմների յուղի լրացման համար:
- g. Ձուլակենտրոն ԲԲԸ-ում փակ տիպի թափոնների կուտակման ժամանակավոր տարածք է համարվում պահեստի առանձնացված տարածք, նախատեսված՝ „Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան” 2 դասի պինդ թափոնի համար: Այն մեկուսացված է առանձին սենյակում, քարե պատերով 5մ² տարածքում: Թափոնը ժամանակավոր պահվում է ստելաժների վրա
- h. Ձուլակենտրոն ԲԲԸ-ում փակ տիպի թափոնների կուտակման ժամանակավոր տարածք է համարվում պահեստի առանձնացված տարածք, նախատեսված՝ „Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան” 1 դասի պինդ թափոնի համար: Այն մեկուսացված է առանձին սենյակում, քարե պատերով 4մ² տարածքում: Թափոնը տեղադրվում է փայտե արկղներում, փակված վիճակով:

Ընկերության արտադրական գործունեության պրոցեսում առաջացող թափոնների քանակությունները ըստ թափոնի անձնագրերի /ներկա իրավիճակում 2022թ./

N	Թափոնի անձնագրի համարը	Լիազոր մարմնի ղեկավարի կողմից	կող	Վտանգավոր թափոնի անվանումը	Գործընթացի անվանումը որի ընթացքում առաջանում է թափոնը	Տարեկան առաջացող թափոնի քանակը
---	------------------------	-------------------------------	-----	----------------------------	---	--------------------------------

		հաստատման ամսաթիվը				
1	N 144-13	16.12.2013	92110100 13 01 2	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	Ավտոմեքենաների շահագործում	0տն
2	N 141-13	16.12.2013	31404800 01 99 4	Եռակցման խարամ	Պողպատե մասերի և սարքերի զոդում	0,114տն
3	N 145-13	16.12.2013	35330100 13 01 1	Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեացենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան	Լուսավորության ապահովում	0տն
4	N 140-13	16.12.2013	57500200 13 00 4	Բանեցված օդաճնշիչ դողեր	Ավտոմեքենաների շահագործում	4,5տն
5	N 143-13	16.12.2013	54100301 02 03 3	Իրենց սպառողական հատկությունները կորցրած շարժիչային յուղերի մնացորդներ	Ավտոմեքենաների շահագործում	0,024տն
6	N 146-13	16.12.2013	17190106 01 00 4	Տարատեսակ փայտի մշակումից առաջացած եզրակտրտվածք (օրինակ՝ եզրակտրտվածք պարունակող փայտե-տաշեղային և/կամ փայտե-թելքավոր սալիկների)	Փայտե տարաների պատրաստում, փայտե իրերի վերանորոգում	4,4տն
7	N 34-10	06.09.2010	31201810 01 004	Էլեկտրովառարանային ֆերոսիլիցիումի խարամ	Սև մետաղից ձուլվածքների արտադրություն, հալման պրոցես	189,6տն
8	N 142-13	16.12.2013	31402500 01 99 4	Կաղապարային խառնուրդի թափոններ	Հեղուկ պողպատի լցումը պատրաստի կաղապարների մեջ	45տն

Թափոնը (Էլեկտրավառարանային ֆերոսիլիցիումի խարամ 3120181001004)

ամբողջությամբ տեղադրվում է Չարենցավան քաղաքի աղբավայրում ըստ պայմանագրի:

Թափոնը (Կաղապարային խառնուրդի թափոններ 3140250001994) ամբողջությամբ տեղադրվում է Չարենցավան քաղաքի աղբավայրում ըստ պայմանագրի:

Թափոնը (Բանեցված օդաճնշիչ դողեր 5750020013004) նորով փոխարինվելուց հետո թողնվում են համապատասխան սպասարկման կետերում:

Թափոնը (Եռակցման խարամ 31404800 01 99 4) հավաքվում է մեխանիկական արտադրամասում, առանձնացված տարրաներում և որպես մետաղի ջարդոն տրվում է հալման տեղամասի ինդուլցիոն վառարաններին անմիջապես մեր ձեռնարկությունում:

Թափոնը (Տարատեսակ փայտի մշակումից առաջացած եզրակտրտվածք (օրինակ՝ եզրակտրտվածք պարունակող փայտե-տաշեղային և/կամ փայտե-թելքավոր սալիկների) 17190106 01 00 4) հավաքվում է փայտամշակման տեղամասում առանձնացված տարածքում և տրվում է ձեռնարկության աշխատակիցներին որպես վառելիք:

Թափոնը (Իրենց սպառողական հատկությունները կորցրած շարժիչային յուղերի մնացորդներ 54100301 02 03 3) հավաքվում է տրանսպորտային տեղամասում, առանձնացված տարրաներում: Հետագա օգտագործման նպատակով այն կիրառվում է ձեռնարկության հիդրավլիկ համակարգերի յուղի լրացման համար:

Թափոնը (Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան 92110100 13 01 2) նորով փոխարինվելուց հետո պահվում են տրանսպորտային տեղամասում առանձնացված սենյակում:

Ընկերության արտադրական գործունեության պրոցեսում առաջացող թափոնների քանակությունները՝ առավելագույն արտադրական հզորությանը հասնելու դեպքում /հեռանկարում 50000տ/տարի/

N	Թափոնի անձնագրի համարը	Լիազորմամնի ղեկավարի կողմից հաստատման ամսաթիվը	Կոդ	Վտանգավոր թափոնի անվանումը	Գործընթացի անվանումը որի ընթացքում առաջանում է թափոնը	Տարեկան առաջացող թափոնի քանակը
9	N 144-13	16.12.2013	92110100 13 01 2	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	Ավտոմեքենաների շահագործում	0,5տն
10	N 141-13	16.12.2013	31404800 01 99 4	Եռակցման խարամ	Պողպատե մասերի և սարքերի զոդում	0,8տն
11	N 145-13	16.12.2013	35330100 13 01 1	Բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային և սնդիկ պարունակող խողովակներ և խոտան	Լուսավորության ապահովում	0
12	N 140-13	16.12.2013	57500200 13	Բանեցված օդաճնշիչ	Ավտոմեքենաների	4,5տն

			00 4	դողեր	շահագործում	
13	N 143-13	16.12.2013	54100301 02 03 3	Իրենց սպառողական հատկությունները կորցրած շարժիչային յուղերի մնացորդներ	Ավտոմեքենաների շահագործում	1,2տն
14	N 146-13	16.12.2013	17190106 01 00 4	Տարատեսակ փայտի մշակումից առաջացած եզրակտրտվածք (օրինակ՝ եզրակտրտվածք պարունակող փայտե- տաշեղային և/կամ փայտե-թելքավոր սալիկների)	Փայտե տարաների պատրաստում, փայտե իրերի վերանորոգում	4,4տն
15	N 34-10	06.09.201 0	31201810 01 004	Էլեկտրովառարանային ֆերոսիլիցիումի խարամ	Սև մետաղից ծովվածքների արտադրություն, հալման պրոցես	6760տն
16	N 142-13	16.12.2013	31402500 01 99 4	Կաղապարային խառնուրդի թափոններ	Հեղուկ պողպատի լցումը պատրաստի կաղապարների մեջ	3060տն

Թափոնների քանակի մեջ փոփոխության կենթարկվի միայն

**Էլեկտրովառարանային ֆերոսիլիցիումի խարամի /31201810 01 004/ ծավալը կապված
թողարկվող արտադրանքի հզորությունից՝ արտդրվող ապրանքի տեսակից:**

Թափոնների հեռացման վայրերի ուսումնասիրություն

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («ՀՄԿ» ՊՈԱԿ) կողմից, ի աջակցություն թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեսուրսների ստեղծման, աղբավայրերի ներկա վիճակի ուսումնասիրման, ինչպես նաև այնտեղ կուտակվող աղբի ծավալների վերաբերյալ տեղեկություն հավաքագրելու նպատակով կատարվել են հետազոտություններ Զերմուկ, Ստեփանավան, Իջևան,

Մասիս, Արարատ, Արթիկ, Դիլիջան, Թալին, Հրազդան, Չարենցավան, Տաշիր համայնքներում: Տեղեկատվությունն ամփոփված է Կազմակերպության 2021 թվականի շրջակա միջավայրի մասին տարեկան տեղեկագրում:

Կազմակերպությունների գործունեությունից առաջացած թափոնների վիճակագրական տվյալների ուսումնասիրություն

Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման միջոցառումներին ի աջակցություն, կատարվել է ՀՀ տարածքում 2020 թվականին առաջացած թափոնների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրում և վերլուծություն: 2020 թվականին հաշվետվություն ներկայացրած ձեռնարկությունների թիվը կազմում է 1244 ձեռնարկություն, որոնցից 1038-ը՝ մարզերում, 206-ը՝ Երևան քաղաքում:

Չարենցավան համայնք

Աղբավայրը գտնվում է Չարենցավան քաղաքի կենտրոնից 5.0կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 3.0հա տարածք: Չարենցավան համայնքի աղբավայրում տեղադրվում է նաև հարակից 5 համայնքների կողմից գոյացված կենցաղային թափոնները, որոնք տարեկան կազմում են 3200.0մ³: Չարենցավան համայնքի աղբահանությունը իրականացվում է «Բարմակ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային հիմքերով, 2 հատ Գազ 53 հատուկ աղբատար, 2 հատ Զիլ և 3 հատ Գազ 53 ինքնաթափ տեխնիկայի օգնությամբ: Աղբահանության սակագինը մեկ շնչի համար Չարենցավան համայնքում կազմում է 200 դրամ, իսկ գյուղերում 150 դրամ:



13. Շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր

Կենսաբազմազանություն

Ինչպես արդեն նշվել է նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Ընկերության սեփականությունը հանդիսացող տարածքում և նոր տարածքների ներգրավում չի նախատեսվում, իսկ գործունեությունն իրականացվում է մարդկային ակտիվ ազդեցություն ունեցող գոտում, ուստի անմիջական ազդեցություն տարածքի կենդանական ու բուսական աշխարհի վրա չի նախատեսվում:

Հիմք ընդունելով վերոգրյալը նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ կենսաբազմազանության վրա հնարավոր բացասական ազդեցության մեղմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների ներգրավում չի նախատեսվում:

Զգայուն կլանիչներ

Զգայուն կլանիչների՝ մասնավորապես բնակավայրերի, վրա նախատեսվող գործունեությունը հնարավոր ազդեցություն չունի, քանի որ մոտակա Չարենցավան քաղաքը գտնվում են համապատասխանաբար 500,0մ-ից մինչև 1,0կմ հեռավորության վրա:

Բոլոր հումքատեսակների տեղափոխումն իրականացվում է փակ ծածկով ավտոտրանսպորտային միջոցներով, իսկ դրանց և արտադրական մնացորդների ընդունումը և պահեստավորումն իրականացվում են փակ շինությունների մեջ՝ դրանց համար նախատեսված համապատասխան բետոնապատ տեղամասերում, բացառելով փոշու հետևանքով տարածքի հնարավոր աղտոտումը:

Օդային ավազանի վրա հնարավոր ազդեցությունը մեղմելու համար անհրաժեշտ է պահպանել Առողջապահության Նախարարի 2010թ-ի «Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 27 հրամանի պահանջները:

Աղմուկի և վիբրացիա

Արտադրական գործունեության ընթացքում աղմուկի և թրթռման մակարդակը գտնվում է թույլատրելի սահմաններում: Հմաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն

աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2-III – 11.3 սափտարակա նորմայի, արտադրական հարթակներում առավելագույն արժեքը սահմանված է 80 դԲԱ:

Ընկերության տարածքի սահմանագծերում աղմուկի մակարդակը չի գերազանցում ֆոնային 30-40 դԲԱ:

Քանի որ ձայնային ճնշման սահմանային թույլատրելի մակարդակները արտադրական սենքերում և տարածքի սահմանագծերում չունեն գերազանցումներ, այլ միջոցառումներ չեն նախատեսվում:

Ընկերության տարածքում թրթռման մակարդակի ցուցանիշները համընկնում են 3-րդ կարգի, տեխնոլոգիական <բ> տեսակի:

Թրթռման (վիբրացիայի) սահմանային թույլատրելի մակարդակները

3-րդ կարգ - տեխնոլոգիական՝ «բ» տեսակ

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Սահմանային թույլատրելի մեծությունները X_0 , Y_0 և Z_0 առանցքներով							
	Թրթռման արագացում				Թրթռման արագություն			
	մ/վրկ²		դԲ		մ/վ . 10²		դԲ	
	1/3 օկտավում	1/1 օկտավում	1/3 օկտավում	1/1 օկտավում	1/3 օկտավում	1/1 օկտավում	1/3 օկտավում	1/1 օկտավում
1,6	0,035		91		0,350		97	
2,0	0,032	0,056	90	95	0,250	0,500	94	100
2,5	0,028		89		0,180		91	
3,15	0,025		88		0,130		88	
4,0	0,022	0,040	87	92	0,089	0,180	85	91
5,0	0,022		87		0,070		83	
6,3	0,022	0,040	87	92	0,056	0,089	81	85
8,0	0,022		87		0,045		79	
10,0	0,028		89		0,045		79	
12,5	0,035	0,079	91	98	0,045	0,079	79	84
16,0	0,045		93		0,045		79	
20,0	0,056		95		0,045		79	
25,0	0,070	0,160	97	104	0,045	0,079	79	84
31,5	0,089		99		0,045		79	
40,0	0,110		101		0,045		79	
50,0	0,140	0,320	103	110	0,045	0,079	79	84
63,0	0,180		105		0,045		79	
80,0	0,220		107		0,045		79	
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները		0,040		92		0,079		84

Առկա թրթռման (վիբրացիայի) սահմանային թույլատրելի մակարդակը (ՍԹՄ) աշխատատեղերում աշխատանքային գործունեության ընթացքում, չի առաջացնում առողջական վիճակի շեղումներ և մասնագիտական հիվանդություններ, ուստի այլ պայմաններ չեն առաջարկվում:

Նախագծային փուլում իրականացվել են շրջակա միջավայրի վրա և աշխատատեղերում աղմուկի և թրթռման մակարդակների գործիքային չափումներ, ըստ տվյալների և վերլուծության արդյունքների աղմուկի և թրթռման մակարդակները համապատասխանում են ՀՀ Առողջապահության նախարարության հրամանով 2002թ սահմանված թիվ 138 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում եվ բնակելի կառուցապատման տարածքներում» և «Աշխատատեղերում, բնակելի եվ հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը» ՀՆ N 2.2.4-009-06 հաստատելու մասին սանիտարական նորմերին սահմանային չափերին:

Հրդեհային անվտանգություն

Արտադրությունում գտնվող բոլոր էլեկտրական ենթակայանները պետք է համալրված լինեն հրդեհային ավտոմոտ սարքերով, որոնք վերահսկվում են տարածքներում հրդեհի յուրաքանչյուր բռնկում և դրանց բացահայտման դեպքում ավտոմատ միացնում են հրդեհների մեկուսացման համակարգը:

Հրդեհի ժամանակ հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, միացվում է հակահրդեհային ջրի համակարգը, իսկ սպասարկող անձնակազմը տեղափոխվում է առավել անվտանգ վայր:

Արտակարգ և վթարային իրավիճակներ

Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ դադարեցվում է գործարանի շահագործումը, հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, միացվում է հակահրդեհային ջրի համակարգը, իսկ սպասարկող անձնակազմը տեղափոխվում է առավել անվտանգ վայր:

Երևույթների և իրավիճակի մասին անմիջապես տեղեկացվում են արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան ծառայության՝ Չարենցավանի ստորաբաժանման պատասխանատուները և տեղական ինքնակառավարման մարմինները:

Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության՝ վերազինման, իրականացման համար լրացուցիչ տարածքների կամ նոր հողային ռեսուրսների ներառում չի նախատեսվում: Գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող և արդեն կառուցապատված՝ Ընկերության սեփականությունը հանդիսացող, արտադրական գոտու տարածքում:

Գործունեության տարածքում հողային ռեսուրսների պահպանման հիմնական միջոցառում են հանդիսանում հումքի և արտադրական մնացորդների /թափոնների/ տեղակայման և պահեստավորման խնդիրները:

Բոլոր հումքատեսակները և արտադրական մնացորդները ընդունվում և պահեստավորվում են փակ շինության մեջ՝ դրանց համար նախատեսված համապատասխան բետոնապատ տեղամասերում, բացառելով հողածածք տարածքները հնարավոր աղտոտումից:

Գործունեության արդյունքում առաջացած թափոնները՝ ըստ իրենց վտանգավորության դասի, Ընկերությունում հավաքվում և պահեստավորվում են դրանց համար նախատեսված ժամանակավոր կուտակման վայրերում: Այդ տարածքները կահավորված են աշխատանքի անվտանգության պահանջներից ելնելով, ինչպես նաև բնապահպանական նորմերի և պահանջների համաձայն:

Տարածքից հեռացվում կամ տրվում են վնասազերծման /ոչնչացման/ համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպություններին, իսկ այն թափոնները որոնք հնարավոր է օգտագործել որպես երկրորդային հումք պահվում են ընկերությունում դրանց համար նախատեսված հատուկ տարածքներում՝ բացառելով հողային և ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և այն փաստն, որ նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ նոր տարածքներ չեն օտարվելու, արտադրական տարածքը մնում է անփոփոխ, ուստի հողային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցության մեղմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների ներգրավում չի նախատեսվում:

Ջրային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության՝ մոլիբդենի խտանյութից մոլիբդենի օքսիդի, այնուհետև ֆերոմոլիբդենի ստացման արտադրության ընդլայնման, ինչպես նաև ենթակառուցվածքների իրականացման արդյունքում տարածաշրջանի ջրային ռեսուրսների վրա լրացուցիչ ազդեցության ավելացում չի ակնկալվում: Ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվում է համաձայն «Ձուլակենտրոն» ԲԲԸ-ի թարմ խմելու ջրի մատակարարումը իրականացվում է պայմանագրային հիմունքներով, Չարենցավան քաղաքի ջրամատակարարման ցանցից:

Ոռոգման ջրատարից, ջրօգտագործման ընկերության հետ կնքված պայմանագրի համաձայն վերցրված ջուրն օգտագործվում է կանաչ տարածքների ոռոգման նպատակներով: Ոռոգմա ջուր մատակարարվել է Կոտայք ՋՕԸ համաձայն 22 մայիսի 2018թ կքված թիվ 32688 պայամանագրի:

«Ձուլակենտրոն» ԲԲԸ-ում դեպի կոյուղու ցանց արտահոսքի ջրերը գոյանում են տնտեսակենցաղային գործունեության արդյունքում: Արտադրական ջրերը, որոնք հիմնականում գոյանում են սարքավորումների հովացման արդյունքում, շրջանառու են: Համակարգը փակ է և արտահոսքեր դեպի կոյուղի կամ շրջակա միջավայր բացակայում են: Ընկերությունում հիդրոմետալուրգիական պրոցեսներ չկան:

Հիմք ընդունելով վերոգրյալը կարելի է եզրակացվել, որ գործունեության արդյունքում տեղանքի ջրային ռեսուրսները զերծ են հնարավոր աղտոտումից:

14. Շրջակա միջավայրի վրա ազդեցության տնտեսական վնասի գնահատում

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N 764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ԶԱԳ + ՕԱԳ ,$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառ-

ված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն.

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողածածկի և ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում, հաշվարկում ներառված է միայն ՕԱԳ-ն:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտված դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \sum_{q=9} \Phi_q \sum_i V_i P_i, \text{ որտեղ}$$

U -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով,

$\sum_{q=9}$ -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի արտադրական հրապարակների համար ընդունվում է 4:

Φ_g -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն

$\Phi_g = 1000$ դրամ:

Ψ_i -ն i -րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է:

Φ_i -ն տվյալ (i -րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Φ_i գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\Phi_i = q (3 S_{\text{Ա}_i} - 2 U\theta \text{Ա}_i), S_{\text{Ա}_i} > U\theta \text{Ա}_i (2)$$

որտեղ՝

$U\theta \text{Ա}_i$ -ն i -րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

$S_{\text{Ա}_i}$ -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Հաշվի առնելով, որ ցրման հաշվարկով ցույց է տրվել, որ $U\theta$ -ի գերազանցումներ չկան՝ $\Phi_i = S_{\text{Ա}_i}$

$q = 1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Մթնոլորտ վնասակար արտանետումների տարեկան քանակները և միանգամյա առավելագույն սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների արժեքները բերված են տեքստի աղյուսակ 6-ում: Մթնոլորտ արտանետվող նյութերի տարեկան քանակը կազմում է 177,65 տոննա: Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի պարամետրերը և քանակները ՄԹԱ-ի հաշվարկների համար բերված են աղյուսակ 3-ում: Մոտակա 5 տարիների ընթացքում ձեռնարկության արտադրողականության փոփոխություն չի նախատեսվում:

Ձեռնարկության արտանետումները չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, հեկապես արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում՝ այդ պատճառով աղյուսակ 5-ը չի լրացվել:

Վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումների հետևանքով շրջակա միջավայրի հասցված տնտեսական վնասը գնահատվում է 8301,8 հազ. դրամ/տարի: Ստորև ներկայացված աղյուսակում բերված է տնտեսությանը հասցված վնասի հաշվարկը [2]:

Նյութերի անվանումը	P_i ՝	C_q	Φ_s ՝ $\text{հ}^3\text{Ս}$	V_i	U ՝ $\text{հ}^3\text{Ս}$
Երկաթի օքսիդ	141	4	1000	13.9	7839600
Ազոտի օքսիդներ երկօքսիդի հաշվարկով	5.75	4	1000	12.5	287500
Ածխածնի օքսիդ	30.9	4	1000	1	123600
ընդամենը					8250700

